Ազգ
Azg

Հոկտեմբեր 19 Երեքշաբթի 1993

ՈՒՍԿՈՒԱՐ ԱԶՏԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 200 (451)
գինը 25 դ.
դասիչ 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Վաշինգտոն

Չիլլերը միջամտության համար հո՞ղ է նախապատրաստում

Ուրբաթ օրը Սոմիտակ տանը նախագահ Քլինտոնի հետ ունեցած հանդիպմանը հաջորդած համատեղ մամուլի ասուլիսում Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը հայկական կողմին կրկին մեղադրեց «Ադրբեջան ներխուժման համար»: Պատասխանելով թղթակիցներից մեկի հարցին, թե Թուրքիայում մարդիկ չե՞ն պահանջում զորքը դուրս բերել Կիպրոսից, ինչպես ամերիկացի ժողովուրդն է Քլինտոնից պահանջում ամերիկացի զինվորներին բերել Սոմալիից, Թանսու Չիլլերը դրական պատասխան տվեց, առա ավելացրեց. «Ճիշտ է, որ իմ ժողովուրդը մտահոգված է այդ հարցով: Սակայն միաժամանակ հարց է տալիս, որ եթե մեր զորքերը նույնպես գտնվում են Սոմալիում, ապա ինչո՞ւ չեն գտնվում նաեւ Ադրբեջանում: Ինչո՞ւ մենք չենք գործում միասնաբար Ադրբեջանում, որտեղ մենք գործ ունենք հայկական ներխուժման հետ»: ■

Այս մասին տես մեր հաջորդ համարներից մեկում.

Դակոս

Ղարաբաղում անդորրը պահպանվում է

Անցած երկու օրերի ընթացքում իրադրությունը ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում շարունակում էր մնալ լարված: Ստեփանակերտի մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ հաղորդագրության համաձայն, ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի տվյալներով, երեկ եւ նախորդ գիշեր Ղարաբաղի ռազմաճակատի առանձին հատվածներում ադրբեջանական կազմավորումները խախտել են հրադադարի վերաբերյալ համաձայնագիրը եւ կարճաժամկետ գնդակոծության ենթարկել հայկական պաշտպանական դիրքերը: Տուժածներ չկան: Այս տեղեկությունները հաստատում է նաեւ Նոյյան տապանի գործակալությունը:

Ըստ նույն գործակալության, Հայաստանի պաշտպանության նախարարության տվյալներով, հոկտեմբեր 17-ի երեկոյան -եւ լույս 18-ի գիշերը իրադրությունը կրկին սրվել է Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Ադրբեջանական կազմավորումները հերթական անգամ խախտել են հրադադարի վերաբերյալ համաձայնագիրը Իջեւանի շրջանի սահմանամերձ հատվածում: Այստեղ Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածից հոկտեմբեր 17-ի երեկոյան ադրբեջանական գրոհայինները նռնականետերից կրակ են բացել Ոսկեպար-Կիրանց ճանապարհով ընթացող բեռնատարի վրա, որի հետեւանքով կան վիրավորներ: Հայկական պաշտպանական ուժերը ձեռնպահ են մնացել պատասխան գործողություններից:

Նույն երեկոյան եւ գիշերը իրադրությունը սրվել է նաեւ հայ-նախիջեւանյան սահմանում, որտեղ կարճատեւ փոխհրաձգություն է արձանագրվել Արարատի շրջանի Երասխավան եւ Մեղրու շրջանի Նյուվադի գյուղերի սահմանամերձ հատվածներում: «Ազգ»

Մեր ընթերցողներին

Երկար տվյալներից ու հետաքննություններից հետո որոշեցինք սպիտակ էջը կատարել՝ այսօրվանից մեր թերթը կրճատվում կլինի 25 տոկոսով, այսօրվանից մեր թերթի տոմարակը կնվազեցվի 11 հազարով: Գների խելացնոր աճի, կենսամակարդակի կտրուկ անկման, ֆինանսատնտեսական ընդհանուր անստուգության, անկանխատեսելիության պայմաններում, մեր թերթի կայուն գինը, գիտենք, կայունության մթնոլորտ է ստեղծում, գեթ՝ ինֆորմացիայի, ազատ խոսքի մատչելիության տրամաբանություն: Սակայն խոստովանենք, դա պատրանք է լոկ, թերթի խմբագրության, աշխատակիցների ու բարեկամների զոհողությամբ ստեղծված պատրանք: Այսօր 11 հազարով նվազեցնում ենք մեր թերթի Հայաստանում ամենաբարձր տպվող, ոչ մի հատիկ չվաճառված օրինակի վերադարձ չունեցող թերթի տոմարակը: Տարօրինա՞կ է: Թերեւս: Որքան որ տարօրինակ է տնտեսագիտության մեջ անսովոր այս երեւույթը՝ որքան շատ տդես, որքան շատ արտադրես, այնքան մեծ կլինի բյուջեի բացը: Եւ մեր բացը կազմում է հիմնականում Նորին անգնահատելիություն թուղթը, որի մեկ տոննան այսօր արժե 450 հազար, նոր ռուբլով: Իսկ մենք օրական սպառում ենք շուրջ 1,5 տոննա: Բայց այլեւս չենք կարող սպառել, չկա: Կրկին ու դարձյալ առաջինում ենք ընթերցողների ըմբռնողությանը: Խորողություն ենք խնդրում, որ այս աստվածատուր, մսի, կաթի ու կարագի բոլոր գների հետ գիտի վերեւ բարձրացած տեսնի նաեւ մեր թերթի գինը: «Ազգ»

Կարգախոսում

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԳՈՐ է ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ 874-ՐԴ ԲԱՆԱՁԵՎԻՑ

Հայաստանի պատասխանն այսօր

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հերթական բանաձեւի ընդունումից անմիջապես հետո Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը հայտարարեց, թե 874-րդ բանաձեւը արդյունք է ադրբեջանական կողմի ձեռնարկած դիվանագիտական քայլերի եւ ինչ-որ տեղ բավարարում է Ադրբեջանի մտահոգությունը: Հասանովը «Ազատություն» ռադիոկայանի ռուսական բաժնին տված հարցազրույցում նշեց, թե բանաձեւը մեկ անգամ եւս հաստատում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, նրա ինքնիշխանությունը, իսկ տեքստում օգտագործվում է «Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջան» արտահայտությունը: Հասանովի ասելով, հայկական կողմը եւ Մինսկի խմբի անդամ այլ ներկայացուցիչներ փորձել են ԵԱՀԽ նոր ժամանակացույցը մտցնել բանաձեւի մեջ, սակայն նրանց չի հաջողվել: Հասանովը ուրախությամբ նշել է, որ ժամանակացույցի պարտադիր կատարման փոխարեն Անվտանգության խորհուրդը այն ողջունում է եւ կոդմերին երաշխավորում կատարել:

Ադրբեջանի արտգործնախարարը, որը մինչեւ Ալիեւի իշխանության գալը ՄԱԿ-ում Ադրբեջանի ներկայացուցիչն էր, դիվանագիտորեն նշեց, թե Ադրբեջանը ողջունում է Անվտանգության խորհրդի երաշխավորությունը, բայց նաեւ առաջարկություններ է ներկայացնում նոր ժամանակացույցի մեջ ներգրավելու համար: Հասանովը հայտարարեց նաեւ, թե ադրբեջանական կողմի պնդումով բանաձեւի մեջ է մտցվել 4-րդ կետը, ըստ որի հակամարտությունից ծագած բոլոր հարցերը, որոնք արտացոլված չեն նոր ժամանակացույցում եւ մնում են չլուծված, կքննարկվեն ԵԱՀԽ խաղաղ բանակցությունների ընթացքում:

Չլուծված հարցերի թվին Հասանովը դասեց Զանգելանի շրջանի, Լաչինի խնդիրները, 50 հազար փախստականների, Շուշիի, Մալիբեյլիի, Խոջալուի հարցերը, որոնք, ըստ արտգործնախարարի, հայկական կողմը փորձում է մոռացության տալ: Բացի այդ, Անվտանգության խորհուրդը բնականությամբ չի ընդունել «հաղորդակցության ուղիների բացում»-«զինված կազմավորումների դուրս բերում» պայմանը եւ նախապայմանությունը տվել է երկրորդ ձեւակերպմանը: Հասանովի ասելով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունել է հավասարակշռված եւ օբյեկտիվ փաստաթուղթ:

Ցավոք, եթե Ադրբեջանի արտգործնախարարությունը դեռ հոկտեմբերի 15-ին արդեն իսկ կարողացավ տարածել իր կարծիքը, ապա Հայաստանի արտգործնախարարությունն իր սովորության համաձայն այսօր միայն պատրաստվում է տարածել պատասխան հայտարարություն, որ մնաց թե մեկնաբաններ կամ շատ արագաբար: Մենք տեղեկացանք նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույնպես պատասխան նամակ կուղարկի ՄԱԿ: Ա. Հ.

Անվտանգության խորհրդի բանաձեւը Ղարաբաղի մասին

Հոկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դարձյալ անդրադարձավ Ղարաբաղյան հակամարտության հարցին: Զանգվածային լրատվության միջոցներով ճնշարկման ընթացքի մասին ոչինչ չի հայտնվել, սակայն վերջնական բանաձեւը այս հարցում ՄԱԿ-ի զարմանալի անգործնականության եւ ինքնագոհության մի նոր արտացոլում է: Վկայակոչելով թիվ 822 եւ 853 բանաձեւերը, որոնց գործունեության հիմք ընդունելով ԵԱՀԽ Մինսկի խմբի ընթացքը, Անվտանգության խորհուրդը «արտահայտում է իր լուրջ անհանգստությունը, որ Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի շրջանի մեջ եւ նրա շուրջը հակամարտության շարունակությունը, Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետությունների միջեւ լարվածությունը կարող է վտանգել շրջանի խաղաղությունը եւ անվտանգությունը»:

Բանաձեւի այս կրկնվող նախաբանը եւ համառորեն ԼՂՀն որպես Ադրբեջանի մաս ճանաչելը բացահայտում է մի պարզ հանգամանք՝ ՄԱԿը չի ձգտում մոտենալ խնդրի էությանը: Փաստաթղթի հետագա շարադրանքն ավելի է շեշտում գործելու պատասխանատվությունից խուսափելու ցանկությունը՝ խոսվում է խաղաղությանն ուղղված տարբեր, սակայն նաեւ իրար հակասող բանակցություններին օժանդակելու մասին: Թերեւս միակ նոր մոտիվը, որը նշմարվում է այս բանաձեւում, Ռուսաստանի օգնությամբ կայացած ուղղակի շփումների վերաբերյալ արտահայտած գոհունակությունն է: Ցավոք, այս դեպքում չեն մասնավորեցված շփվող կողմերը: Ինչը, հաշվի առնելով նախաբանում նշված երեք երկրների անունները, թույլ չի տալիս միարժեքորեն որոշել, թե այդ ում ուսին թափթափեցին:

Սակայն մի կարեւոր փաստ համաշխարհային գերագույն խաղաղարարներն այնուամենայնիվ շեշտել են, դա «արդյունավետ եւ շարունակական» խաղաղությունն է, որը հաստատվել է շնորհիվ ուղղակի բանակցությունների: Բանաձեւում էական տեղ է հատկացված ԵԱՀԽ-ին նվիրված ներբողներին՝ նորից է արտահայտված աջակցությունը այդ շրջանակներում խաղաղության բոլոր գործընթացներին, շահագրգիռ կողմերին կոչ է արված անմիջապես ընդունել «ժամանակացույցը», իսկ այդտեղ տեղ չգտած բոլոր հարցերը լուծելու մանդատը դարձյալ հանձնված է ԵԱՀԽ-ին:

Այսպիսով, այս հերթական թիվ 874 բանաձեւն ըստ էության շրջանի խնդիրներին շարունակաբար հետեւելու նպատակ ունի եւ չնայած գործնական քայլերի կոչերին, միտում չունի վերջնական լուծումներ տեսնելու: «Ազգ»

Էջեր

ԱՄՆ ռազմանավերը պարեկում են Հայիթիի մոտ

Նախագահ Քլինտոնը վեց ռազմանավ ուղարկեց Հայիթիի, հսկելու համար ՄԱԿ-ի պատժամիջոցները, որոնք սկսեցին գործել անցած գիշերվանից: 600 ծովային դեսանտայիններ բերված են մարտունակ վիճակի, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանան փրկել ամերիկյան քաղաքացիներին: Հարյուրավոր սարսափած ամերիկացիներ եւ կանադացիներ խռնված են օդանավակայանում: Երեկ հայտնի դարձավ, որ ամերիկյան նավատորմին են միացել նաեւ Կանադայի եւ Ֆրանսիայի տորմիղները: ՄԱԿ-ի նախագծի, որը նպատակ ուներ իշխանության վերականգնել նախագահ Արիստիդին, հակառակորդների ղեկավարը՝ գեներալ Սեդրասը կոչ է արել Հայիթիի առաջան որոշելու համար համազգային խորհրդաժողով հրավիրել: Մինչդեռ ԱՄՆ Սենատի փոխտարածության ղեկավար Դոուլը հայտարարեց, որ ինքը կպահանջի զորքերի ուղարկման որոշման վավերացում օրենսդիրների կողմից:

ՄԱԿ-ը այլեւս չի փնտրում Այդիդին

Մոտավորապես հազար սոմալցիներ Մոգադիշոյում մասնակցեցին խաղաղ ցույցին, ինչը ցեղային առաջնորդ Այդիդի ռազմատենչ կերպարը փոխելու նպատակ էր հետապնդում: Միեւնույն ժամանակ ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպանը հայտնեց, որ ՄԱԿը դադարեցրել է Այդիդի փնտրումը, չնայած ինքը դեռ հույս ունի գեներալին պատասխանատվության ենթարկել խաղաղապահ զորքերի վրա հարձակումների համար: Իսկ ԱՄՆ Սենատը վավերացրեց Սոմալիից զորքերը հանելու համար Քլինտոնի առաջարկած 1994 թ. մարտի 31 ժամկետը: Նախագահը հայտնեց, թե ինքը բավարարված է ուրբաթ առավոտյան կայացած 76-23 քվեների հարաբերությունից եւ հույս ունի բոլոր ամերիկյան զինվորներին անվնաս տուն վերադարձնել:

Իսրայելը մեղադրում է Սիրիային

Իսրայելի կառավարությունը հայտարարեց, որ Սիրիայի խուսափելու պատճառով մերձավորարեւելյան խաղաղ բանակցությունների հաջորդ փուլը, որ պետք է կայանար հոկտեմբերի կեսերին, հետաձգվեց: Մինչդեռ ԱՄՆ պետքարտուղարությունը մերժեց այս հայտարարության վերաբերյալ անմիջապես մեկնաբանություն տալ:

Մուսուլմանները սպառնում են պայթեցնել մզկիթը

Հնդիկ պաշտոնյաները փորձել են խլաձայն անջատողականներին համոզել ազատել Քաշմիրի սուրբ դամբարանը, սակայն ապստամբները երդվել են պայթեցնել մզկիթը, եթե զորքերը փորձեն ներս մտնել: Վարչապետ Ռաոն հանդիպեց իր օգնականների հետ քննարկելու Հազրաթբալ մզկիթի կացությունը:

Հյուսիսային Կորեան մեղադրում է ԱՄՆ-ին

Ոլորտը հայտնում է, որ Հյուսիսային Կորեան հայտարարել է, թե իր միջուկային ծրագրի կապակցությամբ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում ճգնաժամը կարելի է լուծել միայն Վաշինգտոնի հետ ուղիղ բանակցությունների միջոցով: «Նոդոն Սինմուն» կառավարական թերթն ԱՄՆ-ի վրա է ցցել «հիմնախնդիր ստեղծելու» պատասխանատվությունը: ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Վրաստան

ԶՎԻԱԴԱԿԱՆՆԵՐԸ ԳՐԱՎԵԼ ԵՆ ԽՈՆԻՆ ԵՎ ՍԱՄՍՐԵԴԻԱՆ

Շեւարդնաձեն հույս է դնում Ռուսաստանի վրա

Իրադրությունը Վրաստանում օրեցօր վատանում է: Համաձայն «Ազատություն» ռադիոկայանի հաղորդագրության, Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցների զինված կազմավորումները գրավել են Խոնի եւ Սամսրեդիա քաղաքները եւ շարժվում են դեպի արեւելք: Արյունահեղ մարտեր են մղվել հատկապես Սամսրեդիայի համար: Ըստ որոշ տվյալների, վրացական կառավարական ուժերը տվել են 36 զոհ: «Ազատությունը» հայտնել է նաեւ, թե Գամսախուրդիայի կողմնակիցներին մեծ աջակցություն են ցույց տալիս Հյուսիսային Կովկասի ժողովուրդների Համադաշնության զինված ջոկատները: Իր հերթին, երեկ «Նովոստի» հեռատեսչական ծրագիրը հաղորդեց, թե մարտեր են մղվում ստրատեգիական կարեւոր կետ հանդիսացող Կոդոիսնարի օդանավակայանի համար, որը գտնվում է Քութայիսից մի քանի կմ հեռավորության վրա:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի ղեկավար Է. Շեւարդնաձեն Թբիլիսիում հայտարարել է, թե հանրապետության իրավիճակի կայունացումը կապված է Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների հետ: Նա առանձնահատուկ հույսեր է կապել Ռուսաստանի հետ: Ըստ որոշ տվյալների, Շեւարդնաձեն ռազմական օգնություն է խնդրել Ռուսաստանից: «Ազգ»

Շրջան

ԱՄՆ-ը եւ Անգլիան դժգոհ Գերմանիայի եւ Իրանի կապերից

Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Դ. Հոգը բողոք է հայտնել Գերմանիայի իր գործընկեր Կ. Քինկելին Բոննում ընթացող գերմանական եւ իրանական հետախուզությունների բանակցությունների կապակցությամբ, հայտնում է լոնդոնյան «Դեյլի մեյլ» թերթը: Ըստ թերթի, օրերս Գերմանիա է այցելել Իրանի հատուկ ծառայությունների ղեկավար Ալի Ֆալահիանը, որին ընդունել է Գերմանիայի հետախուզական ծառայությունների համակարգող, գերմանական հետախուզության պետ Բ. Շմիդբաուերը: «Դեյլի մեյլը» գրում է, թե Անգլիայի ԱԳՆ-ը Գերմանիային կասկածում է, որ նա «Մեծ Բրիտանիայի բիկուլտուրա փորձում է Թեհրանին զենք վաճառել»: ԻՏԱՐ-ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Ոլորտ

Հանրաքվեական վարչության նիստում

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրաքվեական վարչության նիստը կայացավ հոկտեմբերի 15-ին, ժամը 15-ին, ՀՌԱԿ կենտրոնական գրասենյակում:

Օրակարգի հարցերից առաջինն էր, ինչպես նախորդ նիստում, ՀՀ-ում դրամաշրջանառության վիճակը, նոր եւ հին ռուբլու անհավասարության, Ռուսաստանում եւ այլ հանրապետություններում հին դրամանիշի շրջանառության դուրս դուրս մղելու հետեւանքով ստեղծված կացության, վիճակից դուրս գալուն ուղղված ՀՀ կառավարության կողմից տրամվող քայլերին: Հարցի մասին զեկուցեց ՀՀ Գխ-ության գլխավոր եւ ՀՌԱԿ խմբակցության անդամ Գուրգեն Հակոբյանը: Նկատի ունենալով, որ Գխ-ում հարցը քննարկվել էր փակ նիստում, գլխավորը ընդհանուր գծերի մեջ ներկայացրեց խնդրի կարգավորման մեխանիզմը, որի իրականացմանը հետամուտ են իշխանությունները:

Նույն հարցի մասին առանձին ելույթ ունեցավ ՌԱԿ գլխավորական խմբակցության ատենադեսի վիգեն Խաչատրյանը, հանրաքվեությունում դրամաշրջանառության վիճակը ներկայացնելով քաղաքականի հետ սերտորեն առնչված՝ մոսկովյան վերջին իրադարձությունների լույսի ներքո: Կարծիքների փոխանակումից հետո հույս հայտնվեց, որ հանրաքվեության նախագահի ու վարչապետի աջակիցներ (երեկվա) այցը Մոսկվա կարգունավորվի, միաժամանակ ակնկալելով, որ անցնող 2-3 ամիսների ընթացքում այս կապակցությամբ իշխանությունների անգործությունը ներելի չէ:

ՀՀ Գխ-ում ներքին վիճակի եւ ՌԱԿ խմբակցության դիրքորոշման մասին հակիրճ զեկուցեց խմբակցության փոխատենադեսի Պետրոս Քաջախյանը, կրկին շեշտելով ՀՀ Գխ-ում բարեփոխումների հարցը:

Զեկուցումով հանդես եկավ նաեւ Հակոբ Ավետիսյանը, ներկայացնելով ՌԱԿ գաղափարախոսական եւ քարոզչական աշխատանքների առկա վիճակը, դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիները:

Վերջում լսվեց զույգ հաշվետվություն: Առաջինը՝ Խայաստրյանի կողմից, Կիպրոս, Դանմարկ, Անգլիա ու Հալեպ կատարած իր այցելությունների եւ ունեցած հանդիպումների մասին: Երկրորդը՝ Հանրապետական վարչության փոխատենադեսի Կարեն Կոստանդյանի կողմից, նախորդ օրը Սոչիում եւ Վանաձոր կատարած այցի մասին: Վարչության անդամները, գոհունակությամբ իմանալով Սոչիսակի շրջգործկոմի նախագահ, Գխ-ում ՌԱԿ պատգամավորական խմբակցության անդամ Պավել Ասատրյանի՝ մահափորձից հետո առաջինման հաջող ընթացքի մասին, ՌԱԿ Հանրապետական վարչությունը խոր անհանգստություն արձանագրեց Հայաստանում ընդհանրապես անհատի անպաշտպանվածության եւ մասնավորապես Գխ-ի պատգամավորի նկատմամբ կատարված փասի աթիվ, համապատասխան մարմիններից պահանջելով ազդու միջոցներ ձեռք առնել կանխելու նմանօրինակ արարքները եւ պատժելու մեղավորներին: ■

Կազմավորվեց ՀՌԱԿ Շրջանային վարչություն

Երեւան քաղաքի Սպանդարյան շրջանում գործող կուսակցության չորս ակումբներից ընտրված պատգամավորները հոկտեմբերի 16-ին գումարեցին շրջանային պատգամավորական ժողով, որի ընթացքում ընտրվեց ՀՌԱԿ Շրջանային վարչություն: Վարչության ատենադեսի ընտրվեց «Ձվարքնոց» ֆիրմայի տնօրեն Հարություն Աթաբեկյանը: ■

Մահազդ

Դադաբյանների ընտանիքը խորը կսկիծով հայտնում է Սուրեն Աբգարի Դադաբյանի մահը:

Հոգեհանգիստը՝ հոկտեմբերի 19-ին, ժամը 17-ին, Աբովյան փողոց 26բ, բնակ. 6 հասցեով:

Հուղարկավորությունը հոկտեմբերի 20-ին, ժամը 14-ին, նույն հասցեով:

Ցավակցություն

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է ՀՌԱԿ Հանրապետական վարչության գործերի կառավարիչ Էդվարդ Դադաբյանին, նրա հոր՝ Սուրեն Աբգարի Դադաբյանի մահվան աթիվ:

Պատերազմ

ՍՊԱՍՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ

Շաբաթ եւ կիրակի օրերին իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում ընդհանուր առմամբ շարունակում էր մնալ լարված, թեեւ հակամարտ կողմերը ձեռնպահ էին մնում լայնածավալ ռազմական գործողություններից: Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի տվյալներով, ադրբեջանական կազմավորումներն անցած երկու օրերի ընթացքում շարունակում էին պարբերաբար խախտել մինչեւ նոյեմբերի 5-ը երկարաձգված հրադադարը: Հոկտեմբերի 16-ին եւ 17-ին ադրբեջանական բանակի ուժերը նռնականետերից եւ հրաձգային զենքից գնդակոծել են Աղդամի շրջանի հայկական պաշտպանական դիրքերը: Ավելի վաղ նկատվել էին ադրբեջանական բանակի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կուտակումներ, եւ լարվածության ավելացումը ռազմաճակատի այս հատվածում կանխատեսելի էր:

հրադադարի անկայունությունը հակամարտող կողմերին եւ առաջին հերթին Ադրբեջանին ստիպում է սպասողական դիրք գրավել՝ ակնկալելով ավելի բարենպաստ ժամանակներ եւ մանավանդ ռազմաճակատի ավելի բարենպաստ գիծ: Մանավանդ որ նախկին ԽՍՀՄ տարածքում ինտեգրացիոն գործընթացների խորացմանը զուգահեռ Ադրբեջանի խաղաթղթերի արժեքը կտրուկ բարձրանում է՝ առաջին հերթին տնտեսական զգալի ներուժի եւ կարեւոր ռազմավարական դիրքի շնորհիվ:

Դրա հերթական առաջադրանքն էր նաեւ մի քանի օր առաջ Կասպից ծովի շրջակա դեպքերի ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ, սակայն, որեւէ պայմանավորվածություն ձեռք չբերվեց՝ ամենից առաջ Ադրբեջանի «կամակորության» մեղքով: Բանն այն է, որ եթե Ռուսաստանը, Ղազախստանն ու Թուրքմենստանը սկզբունքորեն համաձայն էին որպես տարածքային ջրեր ընդունել 10 կամ 20 ծովային մղոն լայնություն ունեցող առափնյա հատվածը, արդա Ադրբեջանը դնդեց 40 մղոնանոց շերտի ընդունման գաղափարը, ինչն առաջին հերթին կաղված է Ադրբեջանի մերձափնյա ծովային շերտում գոյություն ունեցող նավթի հանքավայրերի հետ: Եւ քանի որ Ռուսաստանի համար Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու լծակներից մեկն էլ Ղարաբաղն է, իսկ նախագահ դառնալուց հետո Ալիեւը կարծես այնքան էլ չի շտապում հետեւությամբ Ռուսաստանին զիջել իր անկախության գոնե թվացյալ մասը, դեռեւ է սպասել, որ խոսքն այստեղ պարզապես գնի մասին է, որի ճշտումից հետո դարաբաղյան ռազմաճակատներում կարող են էական փոփոխություններ տեղի ունենալ: Ուստի միանգամայն հասկանալի է այն սպասողական դիրքը, որն այսօր բռնել են Ադրբեջանի իշխանությունները՝ մի կողմից տարբեր մակարդակներով հանդիպումներ ունենալով ԼՂՀ իշխանությունների հետ, մյուս կողմից հայտարարելով, թե իրենց առաջնահերթ նպատակը «նվաճված տարածքների ազատագրումն ու Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումն է»:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Դայլուզա

Ընդհատակյա օդակայան. Դեռի Կովկաս

Մի շարք հաջող գործողություններ են իրականացրել Կալուգայի ՆԳ մարմինները, անվտանգության ծառայությունների հետ համագործակցելով: Մասնավորապես վերջերս անցկացված «Ազդանշան-օդակ» գործողության ժամանակ հայտնաբերվել է հանցագործ մեծ խումբ, որը հիմնականում բաղկացած էր կովկասցիներից: Ինչպես հայտնել են Ռուսաստանի ՆԳՆ-ում, այս խումբը հիմնականում զբաղվել է ավտոմեքենաներ գողանալով եւ Ռուսաստանից դուրս ուղարկելով:

Գործողության ընթացքում հայտնաբերվել է ընդհատակյա օդակայան, որտեղից միայն այս տարվա ընթացքում Հայաստան են ուղարկվել մոտ 50 արտասահմանյան թանկարժեք մեքենաներ: Գողացված 17 մեքենաներ հայտնաբերվել են ավտոկանգառների ստուգման ժամանակ: Երկու շաբաթվա ընթացքում Կալուգայի մարզում ի հայտ են բերվել 11 հանցագործ խմբավորումներ, ձերբակալվել են ավելի քան 400 հանցագործներ, առգրավվել է մոտ 400 միավոր հրազեն: ԻՖ

«ԳՈՒՄԵՏ» ՍՊԸ ԵՎ «ՔՆԱՐԻԿ-93» ՍՊԸ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՄՊԱՆԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

Եթե դուք ցանկանում եք ընտանիքով մշտական բնակության մեկնել ԱՄՆ եւ ստանալ Green Card եւ պայմանագրով 3 տարի ժամկետով աշխատել ԱՄՆ-ում, դիմեք

«ԱՆԻ» հյուրանոց, 5-րդ հարկ, 508 սենյակ, 6-րդ հարկ, 624 սենյակ, հեռախոսներ 594508, 594624

Դարձ

Թոշակառուները կստանան իրենց կարագը

Հայաստանի կառավարությունում անցկացված մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի հերթական նիստում նշվել է, թե մշակված է հատուկ ծրագիր, որով նախատեսվում է մարդասիրական օգնություն ցույց տալ շուրջ 130 հազար փախստականի: Ավելի քան 5 հազար մարդու արդեն հատկացվել են նավթավառներ, լամպեր, հեղուկ վառելիք, սառ հագուստ: Նիստում որոշվել է նաեւ, որ սոցաշ եւ առեւտրի նախարարություններ երկօրյա ժամկետում մեխանիզմներ մշակեն եւ այս շաբաթվա ընթացքում Երեւանի թոշակառուներին (236635 հոգի), գործազուրկներին (17845 հոգի) եւ դոնորներին (220 հոգի) 3 տուփ կարագ տան: «Ազգ»

Փոփոխվել է թղթադրամների մուտքի չափը

Հայաստանի կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին, թե 1961-1992 թթ. թողարկված թղթադրամների մուտքի թույլատրելի առավելագույն չափը սահմանվել է Հայաստանի քաղաքացիների համար 500 հազար, այլ անձանց համար 150 հազար ռուբլի, նախկին 150 հազար եւ 35 հազար ռուբլու փոխարեն: «Ազգ»

ՀՀ Գերագույն խորհրդի լեզվի եւ մշակույթի կրթության եւ գիտության հանձնաժողովի առաջարկությամբ ՀՀ կառավարությունը լեզվի պետական նորաստեղծ տեսչության պետ է նշանակել ֆիզիկոս, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վալերի Սիրգոյանին: «Ազգ»

Բաներ

Նախիջեւանը մթերք է գնում Թուրքիայից

Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը, Թուրքիայի տրամադրած 100 միլիոն դոլլար վարկի հաշվին, Թուրքիայից 10 միլիոն դոլլարի մթերք է գնել: Ինչպես Ադրբեջանի Նախարարների խորհրդում հայտնել են Պոստֆակտումի թղթակցին, Թուրքիայից տրաս վում է նաեւ 18 տոննա ալյուրի, բավարար քանակությամբ կարագի եւ մսի ներմուծում Նախիջեւան: ՆՏ

Ադրբեջանը փախստականների բնակավայրեր է կառուցում

Ադրբեջանի ռադիոն հայտնեց, որ ելնելով Իրանի կողմից 100 հազար փախստականներին օգնելու առաջարկությունից, կառավարությունն արդեն որոշել է փախստականների համար տներ սարքելու վայրերը: 15 հազար մարդ կտեղավորվի Իմիշլիի շրջանում, որտեղ նոր բնակավայր կիմնվի: Մինչդեռ Սահաբլիի, Բեյլագանի եւ Բելոս վարի շրջանում կտեղավորվեն 5000-ական փախստականներ: Ելնելով փախստականների ցանկությունից, նրանցից ոմանք կտեղավորվեն իրենց նախկին բնակավայրերի մոտ տեղադրվող վրանային ավաններում: Շմոան մոտ նախատեսվում է, որ Իրանը կմատակարարի վրանային ավաններ բոլոր անհրաժեշտ ոլորտներով, այդ թվում դեղամիջոցներ, սննդամթերք եւ այլն: BBC

Շվեդական օգնություն փախստականներին

Հոկտեմբերի 14-ին շվեդական կառավարությունը հայտարարեց, որ 40 միլիոն կրոն (5 միլիոն ամերիկյան դոլլար) կտրամադրի Վրաստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի փախստականներին օգնելու նպատակով: Այս միջոցներից յուրաքանչյուր երկրին կտրվի 10-ական միլիոն կրոն: Գումարները կտրամադրվեն ՄԱԿ-ի փախստականների բարձր հանձնաժողովի, ՄԱԿ-ի մանկական ֆոնդի եւ համաշխարհային առողջապահության կազմակերպության միջոցով: Սինխուա

Բողոքի ցույց Նախիջեւանում

Հոկտեմբերի 11-ին Նախիջեւանի Օրդուբաղի շրջանում 5 հազար ցուցարարներ բողոքում էին հանրապետության ոստիկանության ղեկավար Իլգար Սեյիդօղլուի պաշտոնազրկման դեմ: Հանրապետության ներքին գործերի նախարար Սեյիդօղլուն, որը հայտնի էր որպես նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հավատարիմ անձ, հանվել էր պաշտոնից Բաքվի հրամանով: Ցուցարարները պահանջում էին ոստիկանության ղեկավարի վերականգնում պաշտոնում եւ պահանջում էին ժողովրդական պատգամավորների նստաշրջան այս հարցը քննարկելու համար: BBC

Ադրբեջանում կգինաթափվեն անօրինական զինված խմբավորումները

Ադրբեջանում ստեղծվել է հատուկ շտաբ, որը պետք է կարգավորի առոչինչ զինված խմբավորումների զինաթափման գործընթացը, գենի եւ ծերբակալի դասալիքներին, հավաքի ժողովրդի մոտ գտնվող չգրանցված զենքը: Շտաբի ձեւավորման հրամանը, որի կազմում ընդգրկվել են պաշտպանության, անվտանգության եւ ներքին գործերի նախարարները, ստորագրել է վարչապետ Սուրաթ Հուսեյնովը: Ադրբեջանի կառավարության լրատվական կենտրոնի աշխատակիցը, մեկնաբանելով այդ փաստը, ասաց, որ դրա գործադրման ոլորտում են հայտնվում բոլոր զինված խմբավորումները, որոնք չեն գտնվում ՆԳ եւ պաշտպանության նախարարությունների կազմերում: Խոսքն առաջին հերթին Աժճ-ի զինված ջոկատների մասին է: Միեւնույն ժամանակ Աժճ-ի լրատվական կենտրոնից հայտնեցին, որ ճակատը ոչ մի զինված ջոկատ չունի: ԻՖ

digitised by A.R.A.R.@

Սոցիալական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է 100 ՀԱԶԱՐԻՆ

Համաձայն ՀՀ գործող օրենքի, գործազուրկ են համարվում աշխատունակ տարիքի այն բոլոր քաղաքացիները, որոնք գրանցված են պետական զբաղվածության կենտրոններում: Այժմ հանրապետությունում գործում է 41 այդպիսի կենտրոն: Աշխատանքի եւ սոցիալական նախարարության փոխնախարար Բ.Լեյանի վկայությամբ, այս տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվվում է 56 հազար 332 գործազուրկ, հոկտեմբերի 1-ի տվյալներով այդ թիվը հասել է 93 հազար 781-ի, որի մոտ 20 տոկոսը, ըստ Երեւանի զբաղվածության կենտրոնի տնօրեն Խ. Գարանյանի, Երեւանի բնակիչներ են: Հոկտեմբերի 1-ին մայրաքաղաքում արդեն գրանցված էր 18 հազար 408 գործազուրկ (հունվարի 1-ին մոտ 12 հազար):

Ամենից ծանր վիճակը այդ առումով ստեղծվել է աղետի գոտում եւ սահմանամերձ շրջաններում: Այստեղ գործազուրկ է բնակչության 10 տոկոսը: Հոկտեմբերի 1-ի դրությամբ աղետի գոտում գործազուրկների թիվը հասնում է մոտ 25 հազարի, այդ թվում Գյումրիում՝ 8775, Վանաձորում՝ 10404, Սպիտակում՝ 892: Սահմանամերձ գոտում հաշվվում է մոտ 15000 գործազուրկ, հոկտեմբերի 1-ին Գորիսում կար 1285, Իջեւանում 2926, Կապանում՝ 4434, Վարդենիսում՝ 1122, Նոյեմբերյանում՝ 825 գործազուրկ:

Գործազուրկների մոտ 60 տոկոսը կանայք են: Հունվարի 1-ի դրությամբ 56332 գործազուրկներից 35981-ը կանայք են: Գործազուրկների մոտ 35 տոկոսը ունեն բարձրագույն կրթություն: Այստեղ եւս գերակշռողը կանայք են: Հոկտեմբերի 1-ի տվյալներով, 9639 բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկներից՝ 5649-ը նույնպես կանայք են:

Գնալով բարդանում է հանրապետության բուհերի շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցը: Եթե 1991 թվականին ինքնատեղավորման իրավունքով դիմել են սացել հանրապետության 14 բուհերի շրջանավարտների 67 տոկոսը, ապա այս տարի արդեն 82 տոկոսը: Գերակշռում են ինժեներատեխնիկական կրթություն ունեցող գործազուրկ քաղաքացիները:

Գործազուրկների մեծ մասը միջին տարիքի է: Հոկտեմբերին Երեւանում 41-ից մինչեւ բոլոր տարիքի՝ 6500 գործազուրկ:

Աշխատանքի զբաղվածության կենտրոնների խնդիրը ոչ միայն գործազուրկների գրանցումն է, այլեւ նրանց համապատասխան աշխատանքի տեղավորումը:

Համաձայն ՀՀ գործող օրենքի, գործազուրկին առաջարկվող աշխատանքը պետք է համապատասխանի նրա կրթությանը, մասնագիտությանը եւ որակավորմանը: Առաջնահերթ է համարվում միայնակ մայրերին, մինչեւ 14 տարեկան 3 երեխա ունեցող մայրերին եւ կալանավայրերից նոր վերադարձած գործազուրկներին աշխատանքի տեղավորման հարցը: Հոկտեմբերի 1-ի դրությամբ Երեւանի աշխատանքի զբաղվածության կենտրոնի շնորհիվ աշխատանքի են տեղավորվել մոտ 500 մարդ: Այժմ այս կենտրոնը կարող է առաջարկել 2107 աշխատատեղ, որից 1356-ը բանվորական: Աշխատանքի զբաղվածության կենտրոններ հաճախ են կազմակերպում գործազուրկների վերամասնագիտացման կուրսեր:

Վերջերս Համաշխարհային բանկի կողմից աշխատանքի զբաղվածության կենտրոնին տրամադրվել է 3.1 մլն. դոլար աշխատանքի զբաղվածության կենտրոնների կոմպյուտերացման եւ սարքավորումների ձեռք բերման, կադրերի մասնագիտական ուսուցման, գործազուրկների վերամասնագիտացման համար: ԼՏ

Գները Ստեփանակերտի շուկայում. Թանկացումներ

Գների նոր ինդեքսավորման կապակցությամբ Ստեփանակերտի շուկաներում նկատվում է առաջին անհրաժեշտության ապրանքների եւ գյուղատնտեսական մթերքների զգալի թանկացում:

Հոկտեմբերի 14-ի դրությամբ այսպիսին էին շուկայական գները.

միս՝ չկա (աթկայության դեպքում)

խոզի միս՝ կիլոգրամը - 1800 ռ
ոչխարի միս - 1400 ռ
տավարի միս - 1000 ռ
պոմիդոր - 70-100 ռ
բադրիջան - 500-550 ռ
կաղամբ - 100 ռ
սոխ - 350-400 ռ
կարտոֆիլ - 250-400 ռ
լոբի
բարմը - 500 ռ
չորը - 1000 ռ
սխտոր - 600-800 ռ
ընկույզ - 1200-1400 ռ
խնձոր - 200-250 ռ
տանձ - 250 ռ
ձմերուկ - 300 ռ
սերկեւիլ - 200 ռ
դոշաբ (երեք լիտրանոց բանկա) - 9000-10.000 ռ
պանիր (չկա, աթկայության դեպքում) - 2000-2100 ռ
շոկոլադի կոնֆետ - 3500 ռ
կարամել կոնֆետ - 4500 ռ
650 գր մակարոնեղենի տուփը - 700 ռ
թեյի տուփը - 250 ռ
հայկական արտադրության ծխախոտ «Արին-բերդ», «Կոսմոս» - 220-250 ռ
«Աստղ» - 150 ռ
արտասահմանյան արտադրության ծխախոտ
«Մալբորո», «Բեմել», «Ֆիլիպ Մորիս» - 1700-2000 ռ
«ԼՄ», «Պրեզիդենտ» - 1000 ռ
«Կինգ» «Պիր» - 700-800 ռ
ոգելից խմիչքներ.
օղու շիշը - 1000 ռ
կոնյակի շիշը - 700-800 ռ

Նշենք, որ բերված գներն անկայուն են եւ օր-օրի փոխվում են:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Extension program

AUA Presents a Special Course on American Culture through Film Given by the English Department through Extension.

The course will consist of film viewings and five one-hour-and-a-half classroom sessions. The films will focus on different aspecrs of American History and Culture. On the Tuesday after the film there will be a class in AUA Rm. 20 discussing the film and developing critical reading, witing and speaking skills. The lecture will be given in English and the course will be considered an English course.

Applications must register by Oct. 25 and 25-30 people will be chosen among the applicants by personal interview on Tuesday Oct. 26 at p.m. at the English Department Office Room 22.

Registration materials and syllabus can be found in the University's Registrar's Office Rm. 19 open between 9 a.m. - 5 p.m. See syllabus for further details. For Further information please call: 27-33-70, 27-16-58.

Հարց

Վերջին տարիներին Հայաստանում անոթոտ զույգերի թիվն ավելացել է

Որո՞նք են դրա հիմնական պատճառները, որքանո՞վ է արդյունավետ բուժումը. այս եւ այլ հարցերի պատասխանները ստանալու համար «Նոյյան տապան» գործակալության թղթակիցը դիմեց «Մոր եւ մանկան առողջության պահպանման» գիտահետազոտական կենտրոն, «Ընտանիքի, ամուսնության եւ սեքսոպաթոլոգիայի» հանրապետական կենտրոն եւ թիվ 2 ծննդատուն:

«Մոր եւ մանկան առողջության պահպանման» կենտրոնի բժշկուհի Մերի Խաչիկյանը որպես անպտղության հիմնական պատճառ նշեց ներգաղթ ախտաբանական երեւույթները: Նրա կարծիքով, մեծ դեր է խաղում նաեւ էկոլոգիական ոչ մաքուր շրջապատը: Անց են կացվել 5 հազար կանանց համաճարակաբանական հետազոտում այն շրջաններում, որտեղ համեմատաբար շատ են արդյունաբերական ձեռնարկությունները: 5 հազար հետազոտված կանանց 24 տոկոսը տառապում է չբերությամբ: Ընդ որում, գոյություն ունի առաջնային (երբ կինը ոչ մի անգամ չի հղիացել) եւ երկրորդային (երբ կինն ունի մեկ-երկու երեխա) անպտղություն: Նշված 24 տոկոսից 3 տոկոսը տառապում է առաջնային, 21 տոկոսը երկրորդային անպտղությամբ:

Կենտրոնի փոխտնօրեն, պրոֆեսոր Գայանե Դոլյանը չբերության պատճառներից առանձնացրեց ինֆեկցիոն բորբոքային հիվանդությունները, սրտեները, սոցիալական կատակլիզմները: Կենտրոնը համագործակցում է «Առողջության համաշխարհային կազմակերպության» հետ: Վերջինս աշխարհի 35 երկրներում, այդ թվում եւ Հայաստանում, ուսումնասիրում է կանանց եւ տղամարդու ամլության հարցերը: Դոլյանի տվյալներով, դիմողների 60-70 տոկոսը բուժում ստանալուց հետո դառնում են ծնողներ:

Կենտրոնում բուժման մի շարք մեթոդների հետ գործում է նաեւ արհեստական բեղմնավորումը: Գոյություն ունի դոնորների բանկ, որի օգնությամբ իրականացվում է բեղմնավորումը, իհարկե, գաղտնի պահելով դոնորի անունը: Ընդ որում, մեկ դոնորից բույլատրվում է բեղմնավորել 5-6 կանանց: Կենտրոնի տվյալներով, 1980 թ. Հայաստանում ամուսնական զույգերի 4.8-18 տոկոսը անպտուղ է եղել: Ընդ որում, միայն Երեւանում՝ 18 տոկոսը: 1990 թ. Երեւանում այդ թիվը հասել է 24.5 տոկոսի: Եթե 1979 թ. անպտղության 27.2 տոկոսն էր պայմանավորված ներգաղթի գեղձերի հիվանդություններով, ապա 1992 թ.՝ 47.6 տոկոսը:

«Ընտանիքի ամուսնության եւ սեքսոպաթոլոգիայի հանրապետական կենտրոնի» սեքսոլոգիական բաժանմունքի վարիչ Գագիկ Գալստյանը անպտղության վերը նշված պատճառներին ավելացրեց նաեւ նորարարությունները զույգերի գենետիկական անհամատեղելիությունը, ինչպես նաեւ հակաբեղմնավորիչ միջոցների ոչ ճիշտ օգտագործումը: Խոսելով անպտղության ամենատարածված պատճառի կանանց սեռական օրգանների բորբոքային հիվանդությունների մասին, Գալստյանը կարեւորեց կանանց եւ աղջիկների տարվա եղանակին ոչ համապատասխան հագնվելը, երբ նորաձեւությանը զոհ գնալով, նրանք մոռանում են իրենց առողջության մասին:

Բժշկական ինստիտուտի մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ամբիոնի աշխատակից Գեորգի Պողոսյանի տվյալներով, 40 տոկոսի դեպքում անպտղության պատճառը տղամարդիկ են: Խոսելով անպտղության պատճառների մասին, Գ. Պողոսյանը ի թիվս այլ պատճառների ընդգծեց առաջին հղիության ընդհատումը: Այն հարցին, թե արդյոք ճի՞շտ է այն փաստը, որ հայ կանանց թիվն ավելին է, նա ասաց, թե այդ տվյալները ստացվում են այն բանի արդյունքում, բանի որ գերակշռում է երկրորդային չբերությունը, դիմողների թիվը նվազում է, դիմում են միայն այն կանայք, որոնք չունեն երեխա: Բժիշկ Պողոսյանի խոսքերով, իրենց դիմող 100 զույգից 30-ը դառնում են ծնողներ: ԼՏ

Քարեգործ

«Սոճուտը» փախստական երեխաներին

Հայոց ճակատագրից եւ բառաբարից երեւի թե երբեք չեն դադարել փախստական, տարագիր հասկացությունները:

Փախստականներին հաճախակի ցույց տվող օգնություններից մեկն էլ Գերմանական Կարմիր Խաչի տրամադրած միջոցներով Հայկական Կարմիր Խաչի ընկերության երիտասարդական կազմակերպության կողմից փախստական երեխաների ամառային հանգստի կազմակերպումն էր:

Գուգարաց աշխարհի գողտրիկ անկյուններից մեկում՝ Ստեփանավանում գործող «Սոճուտ» մանկական առողջարանը 4 ամսվա ընթացքում ընդունեց 180 երեխայի, որոնք կարիք ունեին ոչ միայն հանգստի, այլեւ բուժման: Առողջարանի կոլեկտիվի, Կարմիր Խաչի երիտասարդական կազմակերպության ջանքերով հնարավոր դարձավ հաջողությամբ իրականացնել բանվանդակալից եւ անգիաս եւ ուղղորդված բուժում: Կազմակերպվել են բազում հետաքրքիր, առօրեական միջոցառումներ, որոնք երեխաները դեռ երկար կպահեն իրենց հուշերում: ՀԿԽ-ի ընկերությունը օգնել է առողջարանին, տրամադրելով դեղորայք, սնունդ, վառելանյութ, առյակի, կաթի փոշի, մարզական գույք եւ այլն: Յուրաքանչյուր ամիս ՀԿԽ-ի ընկերությունը երեխաներին նվիրել է մարզական հագուստ, գրքեր, ձայնագրիչներ եւ այլն: Գեղատեսիլ բնության գրկում առօրեական էին երգն ու դարը, խինդն ու ծիծաղը, հետաքրքիր բեմականացումները:

Երեխաները սիրով եւ հետաքրքրությամբ էին լսում, սովորում եւ գործնականում օգտագործում ՀԿԽ-ի ընկերության երիտասարդական կազմակերպության կողմից անցկացվող 1-ին բուժօգնության դասընթացներում ձեռք բերված գիտելիքները, իսկ վիկտորինաներին մասնակցությունը յուրաքանչյուրի համար մի նոր դպրոց էր եւ մի նոր իմացություն:

Մանուկներն իրենց հետ տարան «Սոճուտ» առողջարանի աշխատակիցների ջերմ վերաբերմունքն ու հոգատարությունը: ■

Տեսություն

ՀՀ թեթեւ արդյունաբերությունը կբավարարի 20 մլն. մարդու

Հանրապետությունում ստեղծված էներգետիկ ճգնաժամը հանգեցնում է նրան, որ թեթեւ արդյունաբերությունը աշխատում է իր հզորության միայն 30 տոկոսի չափով: Այդ ոլորտներում արտադրված ապրանքների մոտ 70 տոկոսը դուրս է բերվում ԱՊՀ երկրներ՝ մասնավորապես կոշիկ, տրիկոտաժ եւ կարի արտադրանք, հախճապակի, մետիոր ու թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր:

Նախարարությունը պայմանագիր է կնքել Գերմանիայի հետ թեթեւ արդյունաբերության արտադրած ապրանքների նմուշներն այնտեղ ցուցադրելու, իսկ հետագայում պատվերների դեպքում Գերմանիա ուղարկելու մասին: Առեւտրական պայմանագիր է կնքվել Ֆրանսիայի հետ, որի համաձայն Ֆրանսիա է արտահանվելու տրիկոտաժ եւ կարի արտադրանք: Ստորագրվել է պայմանագիր նաեւ Կանադայի հետ, ըստ որի Գուգարքի կարի արտադրական միավորումն իր արտադրանքն արտահանելու է Կանադա: Նախնական պայմանագիր է ստորագրվել Չինաստանի հետ: Պետք է նշել, որ Չինաստանը Հայաստանին 5 մլն դոլար վարկ է տրամադրել: Այս գումարի կեսից ավելին տրամադրվել է թեթեւ արդյունաբերությանը: Դրա շնորհիվ գնվել է որոշակի քանակությամբ հումք, հատկապես կտորեղեն: Վերջերս Իրանում կայացած Հայաստանի ապրանքների ցուցահանդես-վաճառքին, որը կազմակերպել էր «Արմէքսպորտի» տնօրենությունը, ներկա է եղել նաեւ նախարարության պատվիրակությունը, որը նախնական պայմանավորվածություն է ձեռք բերել իրանական որոշ ձեռնարկությունների հետ Հայաստան հումք առաքելու մասին՝ մոտ 20 տ ակրիլ, 1000 տ բամբակյա թել եւ կտորեղեն:

Այսօր Հայաստանում գործում է 146 խոշոր միավորում եւ 250 ինքնուրույն բաժանմունք: Միավորումները գործում են 30-35 տոկոս հզորությամբ: Թեթեւ արդյունաբերության ելամուտների մոտ 30 տոկոսը ներդրվում է պետական բյուջե (համեմատական կարգով, այդ թիվը նախորդ տարիներին չի գերազանցել 25 տոկոսից):

Պետությունն այդ ճյուղին տրամադրել է մոտ 8 մլն վարկ: Ինչպես Նոյյան տապանի թղթակցի հետ իր զրույցում ասաց Հայաստանի Հանրապետության թեթեւ արդյունաբերության նախարարի տեղակալ Մ. Հակոբյանը, թեթեւ արդյունաբերության հեռանկարային ճյուղերից են առաջնակարգ հումք արտադրող ձեռնարկությունները: Արդեն իսկ վերջնական արտադրանք տվող ձեռնարկություններն այնքան են, որ կարող են ապահովվել եւ բավարարել 20-30 մլն բնակչություն ունեցող պետության կարիքները, միայն թե ձեռնարկություններն ապահովվեն էլեկտրաէներգիայով: ԼՏ

Հայաստանի ազգային օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոն

Հոկտեմբերի 23-ին եւ 24-ին
Պրեմիերա
ԼՈՒԻՍ ԳԳԼԱՎՈՐՅԱՆ
Բալետ «Օթելլո»
երկու գործողությամբ
(ըստ Շեքսպիրի համանուն ողբերգության)
Դիրիժոր՝ Օհան Դուրյան
Բեմադրող-բալետմայստեր՝
Վիկեն Գալստյան
Նկարիչ՝ Սարգիս Առուշյան

Թատրոնի գեղարվեստական ղեկավար՝ Տիգրան Լեւոնյան

Սկիզբը՝ ժ. 14-ին: Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղում, ամեն օր ժ. 11-19-ը:

Ուշադրություն

Կազմակերպությունը վաճառում է բարձր որակի պարկեշտ կաղնու փայտից, անսահման խանութքանակով: Գինը պայմանագրային:

Դիմել Արարատի շրջան, գ. Վերին Արտաշատ, Լար-Դոքի 19:

digitised by A.R.A.R.@

Գիտություն

50-ՐԴԸ ԼՈՒՅՍ ԿԲԵՐԻ՞

Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը 50 տարեկան է

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտը, որ կրում է համաշխարհային հռչակ ունեցող ֆիզիոլոգ Լեւոն Օրբելու անունը, այս տարի, ինչպես եւ ողջ Գիտությունների ազգային ակադեմիան, նշելու է իր 50-ամյակը: Իր կեսդարյա հոբելյանը ինստիտուտը լիովին իմաստավորված կարող է համարել, հաշվի առնելով այն վաստակն ու հետքը, որ նա թողել է հայկական ու համաշխարհային գիտության մեջ:

Ֆիզիոլոգիայի ինստիտուտը կազմավորվել է 1943 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիան ստեղծելիս եւ հանդիսացել է նրա հիմնադիրներից մեկը: Այն ժամանակ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի համակարգում գիտական հիմք գոյություն չուներ ինքնուրույն ինստիտուտի կազմակերպման համար, սակայն հանրապետությունում գործում էին մի շարք ֆիզիոլոգիական հիմնարկություններ: Ֆիզիոլոգիական առաջին սկզբնական կազմակերպությունը Հայաստանում 1921 թ. ստեղծված Երեւանի պետհամալսարանի մարդու եւ կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնն էր: Այդ ամբիոնում 1926 թ. գործել է հանրապետությունում առաջին գիտահետազոտական լաբորատորիան: 1932 թ. ստեղծվեց Հայաստանի ֆիզիոլոգիական ընկերությունը: Այս ամենը նախորդել է Հայրենական պատերազմի ծանր տարիներին ինստիտուտի կազմավորմանը, որը սկզբնական շրջանում ղեկավարում էր ակադեմիկոս Խ. Ս. Կոշտոյանցը, աշխատակիցների հետ ուսումնասիրելով նորմալ եւ ախտաբանական պայմաններում ֆիզիոլոգիական եւ կենսաֆիզիկական գործընթացների նեյրոհումորալ կարգավորումը: Հետագա տարիներին ակադեմիկոսներ Է. Հաստաբյանի, Հ. Բունիաթյանի, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ալեքսանյանի, Ս. Բակունցի ղեկավարությամբ ինստիտուտում շարունակվում էին գիտահետազոտական ուսումնասիրությունները, ասենք նաբար նեղդրվում նոր մեթոդներ: Ներդրվեցին էլեկտրաֆիզիոլոգիական մեթոդներ: Ինստիտուտի հիմնական ուղղություններից մեկը դարձավ կենտրոնական նյարդային համակարգի տարբեր բաժինների միջեւ առկա փոխհարաբերությունների օրինաչափությունների ուսումնասիրությունը, միաժամանակ սկսվեցին ուսումնասիրություններ գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիայի բնագավառում:

1959 թ. ինստիտուտին շնորհվեց ակադեմիկոս Լեւոն Օրբելու անունը:

Անցած տարիներին ինստիտուտը ավելի ամրացավ, ընդլայնեց իր նյութատեխնիկական հիմքը, ճշգրտեց գիտական ուղղությունը, իսկ արդեն վերջին տարիներին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վիկտոր Ֆանարջյանի ղեկավարությամբ սեռ ստեղծագործական կադեր հաստատեց նախկին միության եւ արտասահմանի մի շարք խոշոր ֆիզիոլոգիական հիմնարկությունների հետ: «Ֆիզիոլոգիայի ինստիտուտը շատ տարիների ընթացքում լինելով «Ուղեղաբնի եւ ուղեղիկի ամբողջականացման մեխանիզմները» բաժնի եւ «Վեգետատիվ նյարդային համակարգի գործունեության կենտրոնական կարգավորման մեխանիզմները» բեմայի մշակման ուղղությամբ առաջատար նախկին ԽՍՀՄ-ում, կանոնավոր անցկացրել է համամիութենական եւ միջազգային գիտաժողովներ նշված թեմաներով», ասում է ինստիտուտի տնօրեն Վիկտոր Ֆանարջյանը: Այսօր ինստիտուտում աշխատում է գիտնականների մեծ ստեղծագործական կոլեկտիվ՝ 106 գիտաշխատողներ, այդ թվում գիտությունների 15 դոկտորներ եւ 64 թեկնածուներ, ինստիտուտում գործում են 9 լաբորատորիաներ:

Իր այս հսկայական վաստակով ու գիտական պոտենցիալով հպարտ Ֆիզիոլոգիայի ինստիտուտը այսօր կրում է նրկա սոցիալ-տնտեսական իրավիճակի անբարենպաստ ազդեցությունը: Ամենամեծ դժվարությունները կապված են աշխատաժամերի ընթացքում ինստիտուտում էլեկտրաէներգիայի մատակարարման մշտական բացակայության հետ, որը լուրջ խոչընդոտ է գիտափորձերի անցկացման համար: Իսկ ֆիզիոլոգիան լինելով փորձարարական գիտություն, չի կարող տեւականորեն գոյատեւել առանց գիտափորձերի: Մինչդեռ, չգիտես ինչու, ինստիտուտը չի կարողանում իրեն հատկացնել 2 ժամանոց էլեկտրական հոսանքը գոնե ցերեկը նորմալ ստանալ, որ հնարավոր լինի ինչ-որ բան անել: Թերեւս կառավարությունն այդքան էլ անհրաժեշտ չէ, որ չկարողանա ինստիտուտին անհրաժեշտ չափով կաթել հատկացնել մշտական էլեկտրասնուցում առաջանալու համար: Թեեւ միայն այս հիմնարկությունը չէ, որ նման վիճակում է, բայց չէ որ ամեն հիմնարկություն չէ, որ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ է:

Գիտափորձերը կապված են նաեւ ինստիտուտի կենդանանոցի նորմալ գործունեության հետ, սակայն դժբախտաբար ենթափորձային կենդանիների վիճակն էլ նախանձելի չէ: Այդ կենդանիներին սննդով ապահովելը եւս բարդ խնդիր է ինստիտուտի համար, եւ ստեղծվել է այնպիսի մի վիճակ, երբ անուղղակիորեն գիտափորձերի համար նախատեսված կենդանիների մի մասը «զոհաբերվում է» մյուսների պահպանության համար: Մասնավորապես, ճագարների մի մասը վաճառվում է, որպեսզի մյուսների համար ստացված գումարով խոտ գնվի եւ փորձերը հնարավոր լինի շարունակել. երբ... իհարկե, լույս լինի: Նույն վիճակն է նաեւ ինստիտուտի կենդանանոցի սղիտակ առնետների պարագայում: «Մենք չենք ստանում նոր սարքավորումներ եւ տեխնիկա, ասում է պրն. Ֆանարջյանը. էներգետիկ եւ տնտեսական շրջափակման հետ մենք գտնվում ենք նաեւ լրատվական շրջափակման վիճակում: Ինստիտուտի հարուստ գիտական գրադարանը զրկվել է բոլոր արտասահմանյան եւ ԱՊՀ երկրների պարբերականներ ստանալու հնարավորությունից»: Ֆինանսական խիստ սահմանափակության պայմաններում ինստիտուտը զրկվել է նաեւ իր գիտաշխատողներին արտասահման եւ այլ հանրապետություններ գործուղելու հնարավորությունից՝ միջազգային գիտաժողովների մասնակցելու եւ համատեղ գիտական աշխատանք վարելու համար:

Ինչպես տեսնում ենք, բոլոր հնարավորությունները եւ պայմանները կան ինստիտուտի փլուզման համար, չնայած ահռելի գիտական վաստակին ու ճանաչմանը: Գուցե թե ոմանք իրո՞ք նման նպատակ ունեն՝ ավելորդ գլխացավանքից ազատվելու համար: Եթե նույնիսկ դա այդպես էլ չէ, կառավարության նման իներտ վերաբերմունքը գիտական այսպիսի նշանավոր օջախի նկատմամբ վաղ թե ուշ կարող է տանել դրան:

Այսպիսի պարագայում անխուսափելի չէ ուղեղների արտահոսքը, որն արդեն համազգային աղետ է դառնում Հայաստան պետության համար: Ինստիտուտից 5 աշխատակիցներ մշտական բնակություն են հաստատել արտասահմանում, մի խումբ աշխատակիցներ էլ արտասահմանի գիտական հիմնարկներում աշխատում են պայմանագրերով:

Այնուամենայնիվ, չէ՞ որ ֆիզիոլոգիայի ինստիտուտը պետական հիմնարկություն է եւ պետական ֆինանսավորում ունի: Սակայն այս ֆինանսավորում կոչվածը չի ապահովում նույնիսկ աշխատավարձերի վճարումը, որն իր ազդեցությունն է ունենում ինստիտուտի աշխատանքների վրա: Իսկական աշխատանքային պայմաններ են, չէ՞, միջազգային մակարդակ ունեցող գիտական հիմնարկի համար՝ լույս չկա, որ գիտափորձ կատարվի, աշխատավարձը տեղ է հասնում ճանապարհներ մաքրելուց հետո...

«Բոլոր երկրներում եւ բոլոր ժամանակներում հիմնարար գիտությունը հովանավորվել է պետության կողմից, շարունակում է ակադեմիկոս Ֆանարջյանը: Ներկայումս մեզ մոտ աջակցության մակարդակը ցածր է կրիտիկականից: Այսօր շատ է խոսվում գիտության բյուրոկրատիզացիայի մասին, մասնավորապես Գիտությունների ակադեմիայի համակարգում, խոսվում է եւ այն մասին, որ շատ զարգացած երկրներում գիտությունը արվում է բուհերում, որեմն մենք էլ հետեւենք այդ ուղուն: Մեզ թվում է, որ փոփոխությունների ստատեգիան անհրաժեշտ է, բայց դա չպետք է առի միանգամից, եւ ամեն մի արտասահմանյան փորձ չէ, որ ընդունելի է մեր պայմաններում: Պետք է նախապես պահպանել գիտության այն կառույցը, որ գոյություն ունի, արդա նաեւ մտածել նրա կառավարման կատարելագործման մասին:

Այս տեսակետից բնութագրական է ըստ թեմաների ֆինանսավորման օրինակը: Ճիշտ է, դա գիտական մշակումների աջակցման շատ առաջավոր ձեւ է, բայց այդ ամենը իրականացնելի է միայն գիտական աշխատանքի նորմալ պայմաններում: Իսկ մեր պայմաններում այսօր ֆինանսավորման այդ ձեւը ոչ միայն շատ դեպքերում իրեն չի արդարացնում, այլեւ գիտաշխատողների առջեւ շատ դեպքերում առաջավորում է ըստ թեմաների ֆինանսավորման առաջավոր գաղափարը: Մեր աշխատանքների հեռանկարը մեծ չափով կախված է նաեւ այն բանից, թե ինչպիսին կլինի մեր կարը միջազգային գիտական հանրության հետ ստեղծագործական, հետազոտական եւ լրատվական առումով, ինչքանով ամուր եւ արդյունավետ կլինի այդ համագործակցությունը»:

Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը մոայլ հեռանկարների ջատագով չէ, եւ դա կհավատան նաեւ նրա կազմակերպման 50-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը հոկտեմբերի 25-28-ը: Քանի որ գոյություն չունի ազգային հիմնարար գիտություն, այլ կա միասնական գիտություն, որն անհրաժեշտ է հարստացնել գիտական նվաճումներով:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ֆիզիկայի ինստիտուտը օգնության կարիք ունի

Սեպտեմբերի վերջին Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի գլխավոր մուտքի առջեւ հանդիսավորապես բացվեց նշանավոր գիտնական Արտյոմ Ալիխանյանի կիսանդրին (քանդակագործ Ա. Պատրվյան): Այս տարի լրացավ միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների եւ տարրական մասնիկների ատոմարեզում հայրենի գիտնականի ծննդյան 85-ամյակը:

Ճակատագրի հմահաճույք, թե դարգաղես զուգադիպություն է հարկավոր համարել այն փաստը, որ Ա. Ալիխանյանն ինստիտուտը հիմնել է պատերազմական վիճակում գտնվող Հայաստանում, եւ այժմ էլ պատերազմի մեջ գտնվող Հայաստանի համար այն չի կորցրել իր նշանակությունը: Դիտական ներուժի սերուցքը, ճիշտ է, ասենք նաբար «հալվում» է եւ ավելի շատ լցվում արեւմտյան եւ ամերիկյան «ամանները», այնուամենայնիվ, ծգնաժամային պայմաններում բավական առած գիտությունը չպետք է մարի անկախացած երկրում:

Երբ առաջին անգամ առաջ քաշվեց վարկած, թե պետք է հիմնել ֆիզիկայի ինստիտուտ, որը զբաղվելու է տիեզերական ճառագայթների ուսումնասիրությամբ, անհեթեթություն էր՝ երկրորդ համաշխարհային պատերազմում գտնվող Հայաստանի եւ ընդհանրապես Խ. Միության համար: Սակայն Արտյոմ Ալիխանյանը շատ ավելի համառ գտնվեց եւ իրականացրեց իր երազանքը: 1942 թ. 3250 մ բարձրության վրա Արագածում վրանային ճամբարը հետազայում հիմք դրեց Սեւ լճի ափին կառուցվող կայանին, իսկ ավելի ներքեւում Ամբերդի կայանին եւ 1943 թ. Երեւանում կառուցվելիք ֆիզիկայի ինստիտուտին, արդա 1962 թ. շրջանաձեւ արագացուցչին՝ Անդրկովկասում միջուկաֆիզիկական ուսումնասիրությունների ամենամեծ գիտատեխնիկական կենտրոնին:

Որպես անհատականություն Ա. Ալիխանյանը ձեւավորվել է այնպիսի գիտնականների կողքին, ինչպիսիք են Ա. Իոֆֆեն, Ա. Ալիխանովը (նրա եղբայրը), Ի. Կուրչատովը եւ այլոք: Ա. Ալիխանյանի երիտասարդ տարիները համընկան ծնվող միջուկային ֆիզիկայի հետ: Այն ժամանակ նրան հետաքրքրում էր ատոմի միջուկը: Շատ էին չպարզաբանված հարցերը, որոնք լուծումներ էին պահանջում: Աշխատանքները կատարվում էին այն պահանջկոտությամբ, որը հատուկ էին նրան: Նրա նպատակը հստակ էր, գիտեր ինչ անել, որտեղ, ինչպես եւ ինչու:

Ինստիտուտն իր նշանակությամբ աշխարհում երրորդ տեղն էր զբաղեցնում ատոմային էներգիայի հետազոտություններով զբաղվող կենտրոնների թվում: Ուներ բավական հզոր մասավոր ուժ, կատարվում էին իրենց մշակած կամ ավելի շատ կենտրոնից՝ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտից (ՄՀՄԻ, գտնվում է մեծմոսկովյան Դուբնա քաղաքում) ուղարկված հետազոտություններ: Մեծ ուշադրություն դարձնելով նոր տեխնոլոգիաների ուսումնասիրություններին եւ արագացուցիչի վրա աղյուսավոր աշխատանքներին փորձարարական ֆիզիկայի բնագավառում, 1970 թ. Երեւանից, Մոսկվայից եւ Թբիլիսիից մի խումբ գիտնականների, այդ թվում նաեւ Ալիխանյանին, տրվեց Լենինի շահանակ:

Արտյոմ Ալիխանյանի աշխատանքները միջազգային մեծ ճանաչում են գտել եւ նրա հիմնադրած ինստիտուտը դարձել է կործանման եզրին կանգնած գիտական կենտրոն, որն օգնության կարիք ունի:

ՕՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Նոբելյան մրցանակներ ֆիզիկայից եւ քիմիայից Սան Դիեգոյի համալսարանի պրոֆեսոր Քեթի Մալիսը եւ Սայլ Սմիթը Վանկուվերի Բրիտանական Կոլումբիայի համալսարանից նվաճել են քիմիայի բնագավառում Նոբելյան մրցանակը: Նրանք հայտնաբերել են ԴՆԹ մպստայական վերարտադրության եւ գենետիկ կոդի վերարտադրման մեթոդները, ինչը մեծ կիրառություններ ունի բժշկության եւ հիմնարար հետազոտությունների մեջ: Իսկ ֆիզիկայի բնագավառում մրցանակը շնորհվել է Պրինստոնի համալսարանի պրոֆեսորներ Ռասել Հալսին եւ Զոզեֆ Թեյլորին, որոնք հայտնաբերել են բինար պուլսաս կոչվող պտտվող նեյտրոնային աստղերի զույգ:

IMAC
ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՖԻՐՄԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՎԻՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԻՄԱԿ» ֆիրման արտադրողի եւ սպառողի միջեւ խաթարված ավանդական կապերը վերականգնելու, ձեռնարկությունների պահեստներում պատրաստի արտադրանքի կուտակումները արտահանելու, շահավետ պայմաններով նոր սպառողներ գտնելու նպատակով բոլոր շահագրգիռ ձեռնարկություններին, անկախ սեփականության ձեւից, առաջարկում է ստեղծել Հայաստանի եւ ԱՊՀ երկրների գործարար մարդկանց ակումբ եւ մշտապես գործող ցուցահանդես-վաճառք Երեւան եւ Սավրոպոլ քաղաքներում:

Ակումբի անդամներին «ԻՄԱԿ»ը կընձեռի բեռների զեղչ գներով փոխադրումների բացառիկ հնարավորություն դեպի Սավրոպոլ, ինչպես նաեւ անվճար ինֆորմացիա ներքին եւ արտաքին շուկաների վերաբերյալ:

«ԻՄԱԿ»ի համապատասխան ծառայությունները Ձեզ կտան մանրամասն տեղեկություն ակումբի ստեղծման, ինչպես նաեւ ֆիրմայի գործունեության վերաբերյալ:

ՁԱՆԳԱՀԱՐԵՔ՝ 52-97-40, 52-99-83

digitised by A.R.A.R.@

Զրույցներ

Գարեգին արք. Ներսիսյան. «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԲԱՑԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ»

Հայ Առաքելական եկեղեցին խորհրդային աթեիստական շրջափակումների վերացումից հետո դեռ չէր հասցրել լիաթոք շնչել, երբ սփռված եղավ բախվել բազմաեսակ եւ բազմաբնույթ հին ու նոր աղանդների եւ կրոնների օրեցոր աճող հակազդեցությանը: Ինչպե՞ս է դիմագրավում 1700-ամյա եկեղեցին այդ գրոհներին եւ ի՞նչ է պատրաստվում ծեռնարկել իր հոտը պաշտպանելու համար: Այս եւ համանման այլ հարցերի շուրջ է մեր հարցազրույցը Արարատյան Հանրապետական Առաջնորդական փոխանորդ Տեր Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ:

– Այսօր աղանդների ներթափանցումը եւ նրանց ակտիվ գործունեությունը մտահոգություններ առաջ են կանգնեցրել Հայաստանյաց եկեղեցուն, սակայն եղած դժվարությունները եւ խնդիրները միայն դրանով չէ, որ պայմանավորված են: Հայաստանի անկախության ծեռքբերմամբ եկեղեցին վերակազմակերպման լայն ազատություններ ստացավ: Եւ այս շրջադարձային փոփոխությունն անակնկալ էր մեզ համար 70 եւ ավելի տարիներ լիարժեք գործելու հնարավորություններից զրկված եկեղեցին պարզապես անպատրաստ գտնվեց: Չունենք բավարար հոգեւորականներ, իսկ շատ եկեղեցիներ տարիներ ի վեր վերածվել էին պահեստների կամ ավերվել էին: Ավելին, ակնկալվելիք չափերով եւ հիմնավոր գործունեություն ծավալելու նպատակով համապատասխան կառույցներ ստեղծված չէին կամ չէին գործում: Այդ ամենը կարճ ժամանակում անհրաժեշտ էր կազմակերպել, բայց երկրի տնտեսական ծանր վիճակը անդրադարձավ նաեւ եկեղեցու կրոնակրթական, առաքելական, քարոզչական, ինչպես նաեւ եկեղեցաշինական գործունեության վրա: Այնուամենայնիվ, հոգեւոր պտղաբերում առաջին հերթին ծեռնամուխ եղանք կադրերի պատրաստմանը: Օրինակի համար, մենք հիմնեցինք Սեւանի դպրանոցը, որտեղ ուսանում են երեսունչորս սաներ: Գյումրիում հիմնվեց Շիրակի ընծայարանը, որտեղ 20 ուսանողներ կան... Մի խոսքով, երկու-երեք տարի է պետք, որպեսզի անհրաժեշտ քանակի հոգեւորականներ ունենանք: Ահա թե ինչու մենք չենք կարողանում բավարարել ժողովրդի պահանջը: Եւ բացի այդ, գաղտնիք չէ, որ եկեղեցու ներկա գործիչները միանգամայն այլ չափանիշների հիման վրա են պատրաստված: Եթե ժամանակին ծիսակատար հոգեւորական լինելը բավարար էր, որպեսզի բնակչության սպասավորության գործը արդիականացվեր, արդա այսօր եկեղեցու գործիչը նաեւ այլ հատկանիշներ եւ արժանիքներ պետք է ունենա:

Դրանից զատ, քարոզչական կենտրոնի ստեղծմանը ծեռնամուխ եղանք, որպեսզի այցելու հովիվների եւ աստվածաշնչի Հայ Առաքելական եկեղեցու վարդապետությանը քաջածանոթ ավագանիներ մարդկանց ներգրավենք եւ նրանց պարբերաբար ուղարկենք այն շրջաններն ու քաղաքները, որտեղ եկեղեցի եւ հոգեւորականներ դեռեւս չկան: Նման հինգ այցելություններ արդեն կազմակերպվել են, որի ընթացքում կենտրոնի անդամները եղել են գյուղերում, բանտերում ու ծերանոցներում եւ Աստծո խոսքը մարդկանց հասցնելուց բացի նաեւ որոշ բարեգործական միջոցառումներ են իրականացրել...

Երիտասարդների շրջանում ավանդներ կազմակերպելու նպատակով ստեղծել ենք Քրիստոնեական դաստիարակության կենտրոն: Սակայն, երբ տեսանք, որ աղջիկները ներգրավվում են նաեւ դպրոց, խնդրանքով դիմեցինք լուսավորության նախարարություն, որպեսզի կրթօջախներում եւս կրոնի ուսուցում կազմակերպվի: Եւ ուրախ եմ ասելու, որ գործին արդեն ընթացք է տրված, եւ հետայսու յուրաքանչյուր դպրոցում մենք պետք է ունենանք Հայ Առաքելական եկեղեցու դավանություն ունեցող եւ համապատասխան կրոնական կրթություն ստացած ավանդիկ անձեր, որոնք էլ կսանձնեն այդ ավանդների անմիջական իրականացումը եւ կվճարվեն եկեղեցու կողմից: Ավելացնեմ, որ պատրաստված են նաեւ դասագրքերը, որոնք 1-2 ամսից, հույս ունեմ, կտրամադրվեն դպրոցականներին:

Եվ մեկ խնդրի առջեւ ենք կանգնել. արտասահմանից եկած զանազան կրոնական կազմակերպություններ մարդասիրական օգնությունը զուգորդեցին իրենց քարոզչական գործունեությամբ, եւ մեր ժողովուրդը, դրան տվորելով, ընդունում է բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում են զուտ քարոզչությամբ հանդես գալ: Բնակավայրերում այն կարծիքն է ստեղծվել, որ եթե կրոնական գործիչներ են եկել, արդա նախ պետք է դրամ կամ մթերք բաժանեն եւ հետո միայն խոսքին անցնեն: Հասկանալի է, որ ժողովուրդը կարիքի մեջ է, միայն թե մենք դրանից եկածների համեմատ ավելի սուղ պայմանների մեջ գտնվելով որոշակիորեն անհարմար դրության մեջ ենք ընկնում: Ճիշտ է, բարեգործությունը, որ եկեղեցու եւ քրիստոնեական վարդապետության հիմնական շաղափներից մեկն է, որը մենք միշտ մեծ ծավալով իրականացնում ենք, քարոզչության պատասխանը չի կարող լինել:

Ինչեւէ: Մեր կրոնակրթական ծրագրի մի ճյուղն է կազմում նաեւ հայորդաց ներկրական բաժին, քարոզչական բաժին, բարեգործական գրասենյակ, կրոնական մշակույթի բաժին եւ այլն: Միայն այդ դեպքում Հայ Առաքելական եկեղեցին հզոր մի կազմակերպության կվերածվի եւ իրավիճակի տերը դառնալով կկասեցնի աղանդավորական շարժումների հետագա ծավալումը:

Բացի այդ, հաշվի առնելով արդեն ստեղծված վիճակը, կարծում եմ, որ «Եղիցի ազատության» օրենքը իր խիստ ժողովրդավարական բնույթով, մեր ներկա օրերի եւ պայմանների համար համապատասխան չէ: Պետականական դրության մեջ գտնվող երկիրը պետք է խիստ օրենք ունենա նաեւ կրոնական ասպարեզի վերաբերյալ:

Բանն այն է, որ այս պրոցեսում պատասխանը շատ ավելի վտանգավոր է, իսկ հետեւանքները, եթե այն տեղի ունենա, ավելի ցավալի, քան քաղաքական, միջկուսակցական առճակատումներն են: Գաղտնիք չէ նաեւ այն, որ աղանդների գործունեությունը գալիս է մեր ժողովրդի ազգային դիմագիծը խեղելու, հոգին աղճատելու եւ մշակույթից ու պատմությունից նրան կտրելու: Իսկ դրանք արդեն պետական կարեւորության երեւույթներ են, քանզի կարող են խարխլել ոչ միայն եկեղեցու, այլեւ պետության հիմքերը:

– Ձեր խոսքում նշեցիք, որ այսօր հոգեւորականը միանգամայն այլ պահանջների պետք է բավարարի: Ի՞նչ նկատի ունեք:

– Ներկա դրությամբ եկեղեցու սպասավորն առաջին հերթին պետք է լինի քարոզիչ եւ մանկավարժ: Հասկանալի է, որ դրանք այսօրվա դրությամբ չնչին տեղ են գրավում կամ ընդհանրապես բացակայում են հոգեւորականների գործունեությունում: Ամբողջ ժամանակը գնում է ծիսական արարողություններ կատարելու վրա: Ավանդությամբ եկած մեր հավատացյալի սերը, հարգանքը, երկյուղածությունը պետք է լուսավորվի: Միայն դրանից հետո նա ավելի գիտակցական մոտեցում կունենա կրոնական կյանքին: Միեւնույն ժամանակ արդեն կարեւորվում են նաեւ հոտի հետ անմիջական շփումներ եւ այցելությունները ընտանիքներ:

Հոգեւորականը պետք է կարողանա նաեւ ժողովրդի բարոյական մաքրության ուղղությամբ աշխատանք տանել, որպեսզի [illegible] երեւույթներին վերջ տրվեն, [illegible] եւ որպեսզի [illegible], բարի փոխադարձ օգնության գործերի շուրջ կարողանան բոլորին համախմբել:

– Նշեցիք նաեւ, որ նյութական միջոցների առումով աղանդների հետ Հայ Առաքելական եկեղեցու մրցակցությունը անհավասար է: Սակայն Հայաստանյաց եկեղեցու վիճակը շատ ավելի բարվոք է. նախեւառաջ իր կառույցներով ու շենքերով եւ, անշուշտ, ժողովրդի հիշողությամբ, ինչպես նաեւ հոգեւորականների քանակով:

– Ճիշտ է, սակայն այդ ամբողջը աշխատող մշակների կարիք ունի: Այսօրվա իրողությունն այն է, որ մեկ հոգեւորականը երկուսի, երեքի գործ է կատարում: Եւ առաջին հերթին կադրային այս բացը պետք է լրացվի: Անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ հետեւյալ հանգամանքը: Ըստ էության երկար տարիներ մենք նման գործունեություն չենք ծավալել, իսկ դրսից եկած մարդիկ քարոզչական հսկայական փորձառություն ունեն: Եւ այսօր, երբ կրոնական աշխատանքի հսկայական դաշտ է բացվել, մեր հոգեւորականների թիվը շատ փոքր է:

Այդ ամենը ժամանակ է պահանջում, որը մեզ ի սկզբանե խիստ օրենքների միջոցով պետք է տրամադրեր միայն այդ դեպքում մենք աղանդների հետ հավասար պայմանների մեջ կգտնվեինք. չպետք է մոռանալ, որ մեր գործունեության դաշտը ողջ հայ ժողովուրդն է, իսկ նրանք խիստ նեղ շրջանակներում են գործում:

– Նպատակին ամենեին էլ չի ծառայում հայ եկեղեցիներում մինչ այսօր հնչող, լայն զանգվածների համար անհասկանալի գրաբար խոսքն ու երգը: Եւ արդյոք դա՞ չէ նաեւ այն պատճառներից մեկը, որ հայ մարդկանց մի մասին դեռի աղանդներն է տանում:

– Բնականաբար, այդ խնդիրը կա եւ այն նոր չի սարքվել: Ամենահանրաճանաչ կարծում եմ, որ մենք մեր ավանդականը պետք է պահպանենք: Սակայն անհրաժեշտ է մտածել նաեւ այն մասին, թե ինչպես ժողովրդին հաղորդակից դարձնենք եկեղեցիներում տեղի ունեցող երեւույթներին, որպեսզի հավատացյալը ծիսական արարողությունների ժամանակ բառերական ներկայացմանը ներկա լինելու զգացում չունենա: Դրա համար հնարավոր եմ համարում աշխարհաբար կրոնական գրքերի հրատարակումը, որոնց միջոցով եկեղեցի այցելողները կկարողանան հետեւել գրաբար անցկացվող եւ իրենց հոգու շինությանն ու անձի փրկությանն ուղղված ծիսակատարություններին: Այս դեպքում էլ գալիս ենք այն խնդրին, որ չունենք այդ աշխատանքները կատարելու ընդունակ ուժեր, ինչպես նաեւ ֆինանսական միջոցներ:

Ի դեպ, այս հարցում էլ մենք բավականին զիջում ենք աղանդներին: Նրանք, դրամական մեծ միջոցների տեր լինելով, իրենց գրքերը ձրի են բաժանում: Եւ այս ֆոնի վրա, երբ Հայ եկեղեցին անգամ չնչին գումարով որեւէ վաճառք է կազմակերպում, մարդկանց կողմից սկսում է սխալ հասկացվել եւ հարվածի տակ է ընկնում:

– Գրքերի հրատարակումը եւ նրանց միջոցով գրաբար ընթացող արարողություններին հետեւելը գուցեեւ ելք է, բայց չեմ կարծում, թե այն լավագույնն է: Ի վերջո, մարդիկ եկեղեցի են գալիս անմիջապես հաղորդակցվելու եւ հոգուն ու ցավին հարիր բառեր լսելու:

– Այդ բառերը նրանք կարող են նաեւ ընթերցել եւ միաժամանակ եկեղեցում ստեղծված աղոթաբույր մթնոլորտը օգտագործելով Աստծո հետ իրենց անձնական կապը եւ հարաբերությունը ստեղծել: Եւ ամենակարեւորը. դարեր շարունակ մեր ամբողջ մշակույթը գրաբարով է եղել եւ այսօր միայն եկեղեցում է այն դպրոցվել: Սա ազգային մեծագույն արժեք է եւ ոչ մի դեպքում դրանից հրաժարվել չի կարելի: Իսկ քարոզները եւ Աստվածաշնչի բացատրություններն անշուշտ ժամանակակից հայերեն լեզվով են տարվում: Թերեւս այս մասն է, որ պետք է ավելի ընդարձակվի:

– Դուք հատկապես ընդգծեցիք, որ աղանդավորները վտանգ են ներկայացնում ազգի միասնականությանը, նրա ներարգին եւ էությանը: Սակայն մասնագետները նշեցին, որ նման ճակատագիր գոնե հայ ժողովրդին չի սպառնում, քանզի Հայկի որդիներն այսքիսի մի հատկություն ունեն՝ նրանց շարքը բաժանված ցանկացած կրոն վաղ թե ուշ հայկականացվում է: Ահա թե ինչու ինձ թվում է, որ աղանդների նկատմամբ վախ ներշնչելը ոչ թե իրականությունից, այլ Հայաստանյաց եկեղեցու թույլ լինելուց է բխում:

– Ես միանգամայն դեմ եմ նման կարծիքներին, որովհետեւ տակավին ամբողջական կերպով չի ընկալվում այդ վտանգը: Ներկայիս երեւույթների խաթարիչությունը ողողում է այն հեռավոր ավերումները, որոնք տեղի կունենան, եթե մենք դրա առաջը չառնենք: Իբրեւ փաստարկ բերեմ մեր պատմական փորձը. երբ մեր ժողովրդի զավակները հեռացել են եկեղեցուց, կարճ ժամանակ անց նրանք ձուլվել եւ ուծացվել են: Ամենացայտուն, ամենավառ օրինակը Լեհաստանի հայ գաղութի անհետացումն է:

Բացի այդ, այսօր վաղ է տեսնել այն վտանգը, որի մասին մենք խոսում եւ ահազանգում ենք: Առայժմ աղանդների հայ հետեւորդների հոգուց դեռեւս արմատախիլ չի արված ոչ մեր ազգային պատմությունը եւ ոչ էլ գիտակցությունն ու մշակույթը: Բայց վաղը եկող սերունդը աստիճանաբար խզելու է իր կապը հայրենի արմատների հետ: Նրան չի հարգվելու Մատեռ, նա չի սնվելու Նարեկացուց, Շիրակացուց, Շնորհալուց, նրա համար խորթ են դառնալու այն արժեքները, ինչ որ հավերժական եւ հաստատուն են եւ այս ծեւով կերպարանափոխվելու են:

– Բայց չէ՞ որ մենք ունենք ավելի հին աղանդներ, որոնց հետեւող հայերը այդպես էլ չկտրվեցին իրենց «հողից ու ջրից»:

– Ես հետեւյալը կցանկանայի ասել. եթե ինքներդ խորապես ճանաչեք, մոտենաք, ստիպեք այդ կրոնական հանդիսություններին, արդա կտեսնեք, որ նրանք հաջողություն չեն գտել մեր ժողովրդի կյանքում եւ, հետո, կերեւան նաեւ Հայ Առաքելական եկեղեցի հանձնողի եւ նրանց հետեւորդների աշխարհայացքի, ընկալման, հայրենասիրական զգացմունքների եւ ազգային արժեքների գնահատման միջեւ եղած տարբերությունները:

– Միգուցե դա իրոք այդպես է, սակայն դարեր առաջ, երբ հայկական հողում իրենց կոսմոպոլիտ քարոզչությունն էին ծավալում Քրիստոսի երկու առաքյալները, նրանց մտքով էլ չէր անցնում, որ իրենք Հայ ազգային եկեղեցու հիմքերն են դնում: Այն այդպիսին դարձավ աստիճանաբար եւ հայ մարդկանց ծեռով:

– Այո, քանզի քաղաքական իրավիճակը եւ ազգային շահերը քրիստոնեությանը նման ուղղվածություն տվեցին, որը 1700 տարիների ընթացքում գնալով ավելի խորացավ:

Իսկ ներկա դրությամբ մյուս վարդապետությունների համար նման իրավիճակ կամ կեցություն այլեւս չի լինի: Ինչո՞ւ: Որովհետեւ նույն քրիստոնեությունն են քարոզում եւ նրանք, եւ Հայ Առաքելական եկեղեցին: Եւ եթե այդ աղանդները նույնանան նաեւ մեր ժողովրդի ավանդույթների պահպանման հարցերում, եւ փաստորեն նույն ազգային զգեստը հագնեն, ինչն արդեն ունի Հայ եկեղեցին, ապա նրանց գոյությունը պարզապես կիմաստազրկվի:

– Եւ վերջինը: Դուք կրոնական հարցերում կարեւորեցիք պետության շահագրգիռ միջամտության անհրաժեշտությունը: Սակայն հայտնի փաստ է, որ հոգեւոր հարցերում վարչահրամայական միջամտությունը միշտ էլ անցանկալի հետեւանքների է հասցնում: Մասնավորապես անմեղ հալածյալի կերպար է ստեղծում, ճիշտ թե սխալ, հետապնդումների ենթարկվող համայնքների ղեկավարների համար: Այս տեսանկյունից պետությունը ծեզ «արջի ծառայություն» չի՞ մատուցում:

– Երբ մենք ասում ենք, որ կրոնի հարցերում պետական աջակցություն է պետք՝ օրենքների հայկականն ու դրանց անպտման կիրառումը նկատի ունենք: Բայց այդ, ես չեմ կարծում, որ Ռուսաստանում ուղղափառ եկեղեցուն «արջի ծառայություն» մատուցեց, երբ իր տարածքում արգելեց աղանդների գործունեությունը:

Սակայն մեր ուզածն այն չէ, որ կրոնական այլ համայնքները ընդհանրապես արգելվեն: Բայց հարկ է, որ նրանք ընդունված օրենքների շրջանակներում գործեն: Իսկ դրանց չկիրառումը հանգեցնում է նրան, որ նրանք կարող են գնալ եւ եկեղեցու առջեւ քահանային հարվածել կամ արգելված տեղերում իրենց քարոզությունը կատարել:

Այդ մենք ունենք գերություններ, սխալներ ու բացթողումներ, բայց դրանք անպայման կհաղթահարվեն: Հավատացնում եմ, որ հայ հոգեւորականը այս ասպարեզին իր անձը նվիրելով, առաջնորդվում է ամենազգնիվ զգացմունքներով եւ գիտակցությամբ:

Սակայն այսօր է, որ ժողովրդի աջակցությունը եւ մշավորականության նեցուկ լինելն է անհրաժեշտ: Եւ դա ոչ միայն եկեղեցու զորացման, այլեւ ազգաբնակչության բարեկեցության ու մեր պետության կայացման համար:

Հարցազրույցը վարեց
ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆԸ

Հայտարարություն

Սույն թվի հոկտեմբերի 22-ին, ժամը 13-ին «Նախիջ» ԳԱՄ մշակույթի պալատում (Հայկ Հովսեփյան փող. թիվ 8, մետրո Գարեգին Նժդեհ) տեղի կունենա Հայաստանի բազմազավակների միության 3-րդ արտահերթ կոնֆերանսը, որին մասնակցելու են երեսուն խորհրդի ղեկավարներ, այլ պատասխանատու անձինք: Միության անդամների ներկայությունը պարտադիր է:

Հրավիրվում են երեւան քաղաքի եւ մոտակա շրջանների բազմազավակ ընտանիքների ներկայացուցիչները:

Բազմազավակների «Շիրազ» բարեգործական միություն

NICA
INVESTMENT COMPANY

«ՆԻԿԱ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԻՐ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ:

Շահաբաժին
Իտալական սպագետտի
Ծիրանի չիր (պարսկական արտադրության)

Սննդամթերք ձեռք բերելու համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիրը եւ պայմանագիրը:
Վաճառքը կատարվելու է հոկտեմբերի 15-ից 20-ը, ժամը 11-ից 18-ը:

Խանութի հասցեն Տերյան 59 (նկուղային հարկ)

digitised by A.R.A.R.@

Արեւելյան Ասիա

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱ՞ՇՔ, ԹԵ ԱՌԱՍՊԵԼ

Վերջին խանհինգ տարիների ընթացքում Արեւելյան Ասիայի ութ երկրներ, իրենց զարգացող տնտեսությունների շնորհիվ, կարողացել են ընդհանուր առմամբ տարեկան վեց տոկոսով ավելացնել իրենց հաղթաթղթերի եկամուտները: Ճապոնիան գլխավորում է այդ երկրների ցուցակը, որի մեջ մտնում են Հարավային Կորեան, Տայվանը, Սինգապուրը, Հոնգկոնգը, Ինդոնեզիան, Մալայզիան եւ Թայլանդը: Դեռ 1965 թվականին բոլորն էլ աղքատ երկրներ էին, բայց մի սերնդից էլ պակաս ժամանակահատվածում նրանք այնքան զարգացան տնտեսապես, որ հասան ամենազարգացած երկրներին, չվարանելով անգամ մրցակցության հայց ներկայացնել նրանցից շատերին տեխնոլոգիական առաջնության համար:

Բոլոր ութ երկրներում էլ տնտեսական առաջընթացի հետեւանքով հարստացել են ոչ թե լոկ խումբ մարդիկ, այլ ամբողջ բնակչությունը. մի փաստ, որն էլ ստիպում է մտածել, թե կարելի է նրանց փորձը ուսումնասիրել եւ ներդնել այլ երկրներում: Ոչ մի կապիտալիստական հզոր զարգացած երկիր այդքան առաջընթաց չի արձանագրել այդքան կարճ ժամանակահատվածում: Այնպես որ, նրանք ետ դասեր ո՞ւնեն նրանցից: Հրա՞շք է սա, առասպե՞լ, թե...

The Economist հանդեսի հոկտեմբերի 8-ի համարը ընդարձակ հոդված է նվիրել այդ հարցին, հրապարակելով Համաշխարհային բանկի զեկուցագիրն այդ առնչությամբ:

Տնտեսագետները երկու տարբեր բացատրություն են տալիս այդ «հրաշքին»: Նրանց մի մասը հաջողությունը վերագրում է ցածր արժեզրկմանը, օրենքների կայուն համակարգին, ներին եւ արտաքին մրցակցությանը, համեմատաբար անխախտ գներին եւ նաեւ կայուն գիտելիքներին ու կրթությանը: Մյուս մասը շեշտը դնում է ազատ շուկայական հարաբերությունների բնագավառում կառավարության խելացի միջամտության վրա:

Առհասարակ, տնտեսագետները երկար են վիճել տնտեսության բարգավաճման բնագավառում կառավարության միջամտության դերի մասին: Ճապոնիայի եւ Արեւելյան Ասիայի մյուս երկրների փորձը ցույց է տալիս, որ նրանց կիրառած մեթոդը ճիշտ է եղել: Համաշխարհային բանկի տվյալներով, բոլոր ութ երկրներում էլ, 1965-ից սկսած, տնտեսությունը տարեկան աճել է 5.5 տոկոսով, որը երկու անգամ ավելի է մյուս ասիական, իսկ 3 անգամ՝ Լատինական Ամերիկայի երկրների արձանագրած հաջողություններից: Նրանց արտահանումները, որոնք 1965-ին կազմում էին համաշխարհային ընդհանուր արտահանումների ընդամենը 9 տոկոսը, 1990-ին հասել են 21 տոկոսի:

Հետաքրքրական է հետեւյալ համեմատությունը. ամենահարուստների քսան տոկոսի եկամուտները ընդամենը ութ անգամ են ավել ամենաաղքատների քսան տոկոսի եկամուտներից, երբ Բրազիլիայում, Մեքսիկայում եւ այլուր քսան անգամ է ավելի: Մալայզիայում բնակչության աղքատ խավը 1960 թվականի 37 տոկոսից նվազել է 5 տոկոսի:

Համաշխարհային բանկի ներկայացրած զեկուցագրում հարաճուն աճի հաջողության գաղտնիքը վերագրվում է այն փաստին, որ այդ երկրները «մաքուր շուկայական հարաբերությունների» փոխարեն հետեւել են «միջամտողական քաղաքականությանը»: Իհարկե, ընդհանուր «դեղատոմս» չկա, նշվում է զեկուցագրում, քանի որ այդ երկրներ միջամտության տարբեր ձեւեր եւ աստիճաններ են կիրառել: Հոնգկոնգն, օրինակ, ամենաբաց շուկայական հարաբերություններն է ունեցել, իսկ Ճապոնիան եւ Հարավային Կորեան, ընդհակառակը, ամենաակտիվ միջամտությունը կառավարության կողմից: Ինդոնեզիան եւ Թայլանդը հետեւել են միջին ուղուն:

Յուրաքանչյուր երկրի քաղաքականության մեջ փոփոխություններ նկատվել են ժամանակի ընթացքում: Այսպես, Հարավային Կորեան, օրինակ, 1960 թվականին ծավալած ընդհանուր արտահանումից հրաժարվեց եւ 1970-ական թվականներին սկսեց առաջնությունը տալ միայն ծանր արդյունաբերական ապրանքների արտահանմանը: Իսկ 1980 թվականին դարձյալ վերանայեց իր դիրքորոշումը, երբ անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել տեխնոլոգիայի զարգացմանն ու արդյունաբերության համեմատաբար թույլ ճյուղերի վերակառուցմանը:

Կիրառված մեթոդների տարբերություններով հանդերձ, ութ երկրների տնտեսական քաղաքականության մեջ ընդհանուր գծեր էլ կան: Նրանք բոլորն էլ սկզբունքային հարցերում ճիշտ են կողմնորոշվել. կարողացել են դայֆարել փողի արժեզրկման դեմ, վարել հստակ դեպական գանձարանային քաղաքականություն, դատողանել են ներին խնայողությունների բարձր մակարդակ, կատարել մեծ ներդրումներ կրթության բնագավառում եւ մեծ տեղ են հատկացրել արտասահմանյան տեխնոլոգիային: Հատկապես փողի արժեզրկման դեմ ծավալված դայֆարն է դրական արդյունք տվել, բարենդաստ դայմաններ ստեղծելով երկարաժամկետ ներդրումների համար:

Նշված ութ երկրների կառավարություններն էլ այս կամ այն չափով միջամտել են տնտեսական քաղաքականությանը: Արդյունաբերական որոշ ճյուղերի նկատմամբ կիրառվող հարկային զիջումներն ու դրամական հատկացումները, ինչպես նաեւ արտահանելու դյուրությունները մեծապես նպաստել են հաջողությանը: Սկզբնական շրջանում բոլոր երկրներն էլ (բացի Հոնգկոնգից ու Սինգապուրից) կարողացել են աղքահովել իրենց ներին շուկան, հիմնվելով ներմուծման դեմ դրված կառավարական արգելքների վրա: Մինչեւ 1980 թվականը Տայվանում 31 տոկոսի էր հասնում ներմուծվող ապրանքների հարկը:

Արեւելյան Ասիայի երկրների տնտեսությունը բարգավաճել է կառավարությունների ճկուն քաղաքականության շնորհիվ: Նրանք կարողացել են մարդկային ռեսուրսների եւ կապիտալի ճիշտ ներդրումներ կատարել: Ընդհանուր կրթության բնագավառին հատկացված բյուջեի 80 տոկոսը տրամադրվել է հիմնավոր գիտելիքների ստացմանը տարրական եւ միջնակարգ դպրոցներում: Համեմատած մյուս երկրների հետ, մասնավոր սեկտորի ներդրումներն զգալիորեն մեծ են եղել շնորհիվ ցածր արժեզրկման եւ գրեթե անփոփոխ տոկոսների: Այնուամենայնիվ, հարկերի, դրամական հատկացումների եւ էժան տոկոսներով վարկերի հատուկ քաղաքականությունն է, որ այդ հարցում ամենից արժանի է գովասանքի: Դա նույնիսկ ավելի մեծ արդյունք է տվել, քան արդյունաբերական ճյուղերի համակարգիչներով հագեցվածությունը:

Արտահանման քաղաքականությունը յուրահատուկ տեղ է գրավում տնտեսության բարգավաճման հարցում: Երկրում բողարկված ապրանքների արտասահմանյան շուկաներում իրացվելու հեռանկարը զգաստացրել է մարդկանց, ամրապնդել կարգ ու կանոնը աշխատատեղերում եւ զարկ տվել արդյունավետությանը: Ճապոնիայում եւ Հարավային Կորեայում մրցակցություն է կազմակերպվել ֆիրմաների միջեւ, չափանիշ ընդունելով արտասահմանում նրանց ապրանքների իրացման տոկոսը, որի հիման վրա էլ նրանց հետագա վարկերն ու ներդրումների չափերն են որոշվել: Նվազեցնելով որոշ ֆիրմաներին հատկացվող կապիտալի չափերը, կառավարություններն այն սկսել են ուղղել համեմատաբար նոպաստավոր ճյուղերի զարգացմանը: Իհարկե, մեծ դեր է խաղացել հիմնարկներում աշխատող դաբեսոնյաների բանիմացությունն ու կոռուպցիայի դակասը: Հոնգկոնգը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Սինգապուրն ու Տայվանը իրավամբ կարող են հպարտանալ իրենց բարձրորակ ու ազնիվ մասնագետներով: Դա նրանց հաջողվել է շնորհիվ, երեւի, այդ մարդկանց բարձր աշխատավարձերի:

Համաշխարհային բանկի զեկուցագիրը, համենայնդեպս, իր եզրահանգումների մեջ զգուշացնում է, որ միեւնույն մոդելի կիրառումն այլ երկրներում նույնքիսի հաջողություններ կարող է չարձանագրել: Տնտեսական զարգացման համար միասնական դեղատոմս չկա, նշում է այն, «սակայն, ինչ խոսք, Արեւելյան Ասիայի փորձն ուսանելի է: Այդ փորձը չի կարող հաջողություն ունենալ հատկապես այն երկրներում, որտեղ արժեզրկումը անցնում է հարյուր տոկոսից եւ որտեղ կառավարությունը լրիվ աչքաթող է արել կրթության բնագավառը: Այնպես որ, դասեր քաղելով հանդերձ, յուրաքանչյուր երկիր դարտավոր է, իր առանձնահատկություններից ելնելով, գտնել իր համար ամենաարդյունավետ միջոցը:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ

ԼՈՒՍԱՆ
ատոցիատիա
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ է ԿՈՄԵՐՑԻՈՆ ՉՎԵՐԹՆԵՐ
ՍԻՐԻԱ Երեւան-Հալեպ-Երեւան ամեն երկուշաբթի
Ցածր գներով առաջարկում է նաեւ անհատական եւ խմբային տուրիստական ճանապարհորդություններ
ՍԻՐԻԱ (Հալեպ 7 օրով),
Ինֆնաթիռներում տեղեր կարող ենք հատկացնել ֆիրմաներին եւ խմբային զբոսաշրջիկներին:
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՁՈՒՉՔԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵԼԻ է ԻՄԱՆԱԼ 52-17-68, 58-68-17 ՀԵՌԱԽՈՍՆԵՐՈՎ:
ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹՎԱ ԲՈԼՈՐ ՕՐԵՐԻՆ:
ՀԱՍՑԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30 ԳԱՌԽԻՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
PUBLISET.

KILIKIA CONCERN
Իր ծրագրերի իրականացման համար «ԿԻԼԻԿԻԱ» կոնցեռնը շարունակում է ներգրավել փոխառու միջոցներ հետեւյալ պայմաններով:
ՌՈՒԲԼՈՎ
1 ամիս ժամկետով 15%
4 ամիս ժամկետով 68%
6 ամիս ժամկետով 120%
1 տարի ժամկետով 300%
ՏԱՐԱԴՐԱՄՈՎ (US $)
1 ամիս ժամկետով 5%
3 ամիս ժամկետով 15%
6 ամիս ժամկետով 30%
1 տարի ժամկետով 60%
ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՉԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ
Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730, 732 սենյակ
Աշխատանքային ժամերը 11⁰⁰-ից 16⁰⁰-ը
Հանգստյան օրերը շաբաթ եւ կիրակի
Հեռախոս 58-11-10
PUBLISET.

Լուրերի Հոսք

Յ. Ռաբին. Ռուսաստանի դերը կախված է իրենից

Չինաստանի լավ հարաբերությունները ՊԱԿ-ի եւ Արաբական աշխարհի հետ չեն հակասում Չինաստանի եւ Իսրայելի կապերին: Երկու կողմն էլ կարող են հաջողությամբ օգտագործել Մերձավոր Արեւելքի խաղաղ կարգավորումը: Այդ մասին հայտարարեց Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը Պեկինում կայացած մամուլի ասուլիսում: Նա նշեց, որ դաստաուս է ցանկացած դահի ցանկացած տեղում բանակցություններ սկսել Արաբական ցանկացած դետության հետ, ներառյալ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի: Խոսելով այդ գործընթացում Ռուսաստանի հնարավոր դերի մասին, Իսրայելի կառավարության ղեկավարը նշեց. «Դերը, որը կխաղա Ռուսաստանը, կախված է իրենից: Մենք սպասում ենք, որ Ռուսաստանը կօգտագործի իր ամբողջ ազդեցությունը (օրինակ Իրանի նկատմամբ, որը չի ընդունում իսրայելա-պաղեստինյան համաձայնագիրը եւ հանդես է գալիս խաղաղ բանակցությունների դեմ), որպեսզի իրական եւ իրատեսական ծայրահեղական խմբավորումները մեղմեն իրենց դիրքորոշումը երջանում կամ հրաժարվեն նրանից»: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

ԱՄՆ-ը անհանգստացած է Չինաստանի առաջխաղացմամբ

«Ռոլ Մորիթ ջրոնը» թերթը գրում է. «ԱՄՆ-ի կառավարությունը լրջորեն մտահոգված է ռազմական հրթիռաշինության ոլորտ մասնագետներին դեպի Չինաստան հրատարելու վերջինիս կառավարության քաղաքներից եւ կարծում է, որ Չինաստանի քաղաքներն ի վերջո նրան հնարավորություն կտան ստեղծել Ամերիկայի տարածքներին հասու միջուկային հրթիռներ: Ինչպես կարծում են ամերիկյան մասնագետները, Չինաստանի քաղաքները հիմնականում կենտրոնացված են CC-25 բալիստիկ միջմայրցամաքային հրթիռների տեխնոլոգիաների ստացմանը: Բարձր աշխատավարձ եւ էլեկտրոնի ոլորտներ խոստանալով, Չինաստանին հաջողվել է նախկին ԽՍՀՄ-ից 3 հազար հրթիռային մասնագետներ բերել Չինաստան, հայտնում է Պեկինում ԱՄՆ նախկին դեսպան Ջ. Լիլը: Դրանից բացի, ինչպես ոլորում են Ամերիկայի դաբեսոնաստ անձինք, չինական հրթիռային ծրագրերին մասնակցության համար ռուս մասնագետներին դարտադիր չէ հեռանալ հայրենիից. չին մասնագետները այցելում են Ռուսաստանի դաբեսոնական ձեռնարկություններ, իսկ նախագծերն ու մաթեմատիկական մոդելները Չինաստան են ուղարկվում էլեկտրոնային փոստով Ռուսաստանի ռազմական լաբորատորիաներից»:
ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Ռուսաստանը նվազեցնում է մթերքի ներմուծումները

Ընթացիկ տարում Ռուսաստանը խիստ կրճատել է դեպական, կենտրոնացված ուղիներով մթերքների ներմուծումը, իսկ 1994 թվականին մտադիր է լրիվ հրաժարվել դրանից. ԻԴ-ին հայտնեց Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսանդր Չավերյուխան, որը դատասխանատու է ագրարային հատվածի համար: Միաժամանակ նա նշեց, որ կոմերցիոն կառույցները կշարունակեն մթերքի ներմուծումները: Ռուսաստանը ավելի քան երկու անգամ այս տարի կրճատել է հացահատիկի ներմուծումը. ենթադրվում է գնել 12 մլն տոննայից ոչ ավելի, երբ անցյալ տարվա այդ ցուցանիշը կազմել է 26 մլն տոննա: Չավերյուխայի խոսքերով, 1993 թվականին երկիրը չի գնի արդյունաբերական հացահատիկ, քանի որ աճեցված բերքը՝ 105-107 մլն տոննա, անցյալ տարվա մնացուկի հետ կբավարարի Ռուսաստանի դահանջները: Անցյալ տարվա համեմատությամբ, Ռուսաստանի ներմուծումները կազմել են. միս՝ 30 տոկոս (92 հազար տոննա), յոր կաթ՝ 10 տոկոս (2,4 հազար տոննա), բուսական յուղ՝ 8 տոկոս (34 հազար տոննա): Շաքարի ներմուծումները չնայած մնում են ամենաբաց մյուս մթերքների համեմատությամբ՝ 1470 հազար տոննա, սակայն դրանք էլ կազմել են 1992 թվականի ընդամենը 54 տոկոսը: ԻԴ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Եվրաթունելը կգործի եկող տարի

Առաջին ուղեւորատար գնացքը սեպտեմբերի թունելով Ֆրանսիայից Անգլիա կմեկնի 1994 թվականի մայիսի 6-ին: Ինչպես հայտնի է, 7 տարի առաջ երկու պետությունների միջեւ Լա Մանշի տակով 9 միլիարդ ֆունտ ստեռլինգ արժողությամբ թունելի կառուցման համաձայնագիր էր ստորագրվել: Սակայն նոր թունելի գործարկման ժամկետը մի քանի անգամ հետաձգվել է այն դաժան, որ նախագիծն իրագործելը շատ ավելի դժվար էր, քան ենթադրվում էր: Սակայն այժմ, դաշտոնական անձանց վկայությամբ, մայիսի 6-ը Եվրաթունելի գործարկման վերջնական ժամկետն է: Դեռ ավելին, առաջին ուղեւորատար գնացքին կնախորդեն բեռնատար գնացքներ, որոնք Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ կսկսեն աշխատել արդեն մարտ ամսից: Սնարք

Ռուսաստան ներմուծել միայն որակյալ ապրանք

Ռուսաստանին ապրանք մատակարարող բոլոր չեխական firmաներն այսուհետեւ պարտավոր են իրենց ապրանքը ներկայացնել զվեյցարական SGS firmայի Պրագայի մասնաճյուղում: Այդ մասին հայտնել է մասնաճյուղի տնօրեն Իրժի Մերունան: Առաջիկայում բոլոր չեխական ձեռնարկությունները, որոնք առեւտուր են անում Ռուսաստանի հետ, պարտավոր են արտահանվող ապրանքի օրինակը ներկայացնել firmային՝ որակի սերտիֆիկատ ստանալու համար: Ռուսաստանի պետստանդարտը գրանցել է SGS firmային, որպես Ռուսաստան ներմուծվող ապրանքների սերտիֆիկատային հսկիչ գործակալություն: Դա կազմված է Ռուսաստանում սպառողի իրավունքների պաշտպանության օրենքի ընդունման հետ: Սնարք

Նախագահ Կառլոս Մենեմը հիվանդանոց փոխադրվեց

Արգենտինայի նախագահ Մենեմը Բուենոս Այրեսի օդանավակայան մեկնելու ճանապարհին անհանգստություն զգալով շտապ տեղափոխվեց հիվանդանոց, որտեղ իսկույն ենթարկվեց ծոծրակի ապրոգի վիրահատման: 63 տարեկան նախագահը, որ համարվում է Արգենտինայի տնտեսական վերականգնման կերտիչը, ձգտում էր փոփոխության ենթարկել երկրի Սահմանադրությունը, անընդմեջ 2-րդ անգամ նախագահ ընտրվելու նպատակով:

Տանկերի փոխարեն մանկական հագուստ

Պետերբուրգի հայտնի Կիրովի անվան գործարանը, որտեղ տարեկզբից դադարեցվել է տանկերի արտադրությունը, անցնում է տրիկոտաժի արտադրության: Կոնստրուկտորային բյուրոներից մեկում արդեն տեղադրվում են մանկական հագուստ արտադրող սարքավորումներ, հայտնեց Պետերբուրգի ռադիոն: ԵՏ

Վրաստան-Ռուսաստան. Հատուկ ծառայությունները համագործակցում են

Հոկտեմբերի 15-16-ը Մոսկվայում կայացած Ռուսաստանի եւ Վրաստանի անվտանգության նախարարներ Ն. Գոնչարովի եւ Ի. Գեորգաձեի հանդիպման ընթացքում քննարկվել են ահաբեկչության, զենքի ապօրինի տարածման, թմրաթիզնեսի դեմ պայքարում հատուկ ծառայությունների համագործակցության հարցեր: Ինչպես հայտնել են Ռուսաստանի անվտանգության նախարարության հասարակական կապերի կենտրոնում, կողմերը քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, որոնց մասին նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել նախագահներ Ելցինի եւ Շեւարդնաձեի հոկտեմբերին կայացած հանդիպման ժամանակ: Համաձայնություն է ձեռք բերվել հատուկ ծառայությունների կապերը չխզելու վերաբերյալ: ՌՏ

Մտքերի

Հոկտեմբերի 16-ին

Հոկտեմբերի 16-ին կայացավ այդ շարքի առաջին համերգը՝ հայտագրում կոմպոզիտորի թիվ 2 կոնցերտը դաշնամուրի եւ նվագախմբի համար (մենակատար Անդրանիկ Ներսեսյան) եւ երկրորդ սիմֆոնիան: Ովքեր ծանոթ են Ռախմանինովի երաժշտական հարուստ ժառանգությանը, կհաստատեն, որ ընտրված գործերը դասական են նրա ստեղծագործական բարձրագույն նվաճումների թվին: Դաշնամուրային 4 կոնցերտներից այս մեկը՝ թիվ 2-ը, ունի մեղեդիական այնպիսի հյուսվածք, որ իր հուզականությամբ ու զգացմունքային ջերմությամբ չի կարող անտարբեր թողնել եւ ոչ մեկի: Այն երազում են կատարել բոլոր դաշնակահարները՝ սկսնակ թե վարպետ: 16-ամյա Անդրանիկ Ներսեսյանին, որն այդ օրը հանդես եկավ հիշյալ ստեղծագործության մենակատարությամբ, դժվար է սկսնակ անվանելը: Չնայած իր ոչ մեծ, ավելին՝ դպրոցական տարիքին, նա արդեն հասցրել է մենահամերգներ ունենալ Հունաստանում, որտեղ ապրում է, եւ Իսպանիայում, նվագել ռադիոյով եւ հեռուստատեսությամբ: Տեղական թերթերն ու մասնագիտական հանդեսները բազմիցս անդրադարձել են հայ շնորհալի դաշնակահարի հաջողություններին:

Անդրանիկը ստացել է երաժշտական փայլուն կրթություն՝ հետեւելով հույն հայտնի դաշնակահար Յանի Ջունգրի դասընթացներին: Այս տարվա հունիսին Հունաստանի մշակույթի նախարարությունը նրան շնորհեց դաշնակահարի բարձրագույն վկայական «բացառիկ» գնահատականով: Կատարելագործվել է «Մայստերկլասե» դասընթացներում Ջուլիարդի դպրոցում (Նյու Յորք) եւ տիկին Մունիեի (Փարիզ) մոտ: Ներկայումս Անդրանիկը, կամ ինչպես օտարներն են նրան կոչում, Էնդին ուսումը շարունակում է Լոնդոնի երաժշտության արքունական քոլեջում (Royal College of Music):

Հայաստանի ֆիլհարմոնիկի մշակական ունկնդիրներն անդայման սաց մտեսրտ Լորիս Ճգնավորյանը, իր նոպատակը մնկն է. «Սփյուռքահայ երաժիշտներին կարել իրենց հայրենի հողի հետ եւ զգացնել տալ, որ հայրենիքը իրենց մեջքին է»: Թիվ 2 կոնցերտի՝ զանգերի դողանջ հիշեցնող առաջին ակորդների հնչեցումից պարզ դարձավ, որ մեր

Ռախմանինովյան օրերի առաջին ակորդը

Անցնող շաբաթավերջին մայրաքաղաքի երաժշտական կյանքը հագեցած էր բազմաթիվ հիշատակելի միջոցառումներով: Դրանցից մեկը ռուս մեծանուն կոմպոզիտոր եւ դաշնակահար Սերգեյ Ռախմանինովի մահվան 50 ամյակի կապակցությամբ կազմակերպված «Ռախմանինովի երաժշտության օրեր» փառատոնն էր, որն անցկացնում էր Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը:

կիիշեն հայ պատանու ելույթը այս տարվա աղրիլին, երբ նա նվագախմբի հետ, որ այն ժամանակ վարում էր Ջորջ Փեհլիվանյանը, կատարեց Էդվարդ Գրիգի Դաշնամուրի կոնցերտը: Սա փաստորեն նրա երկրորդ այցն էր հայրենիք: Ինչպես մինչեւ համերգը սկսվելը մեզ ասաց մտեսրտ Լորիս Ճգնավորյանը, իր նոպատակը մնկն է. «Սփյուռքահայ երաժիշտներին կարել իրենց հայրենի հողի հետ եւ զգացնել տալ, որ հայրենիքը իրենց մեջքին է»: Թիվ 2 կոնցերտի՝ զանգերի դողանջ հիշեցնող առաջին ակորդների հնչեցումից պարզ դարձավ, որ մեր պատանի հայրենակիցը վարժ է տիրապետում դաշնամուրային տեխնիկային, իսկ կատարման հետագա ընթացքը վկայեց, որ նա ունի նաեւ անսամբլային սուր զգացողություն եւ նվագախմբի հետ ներդաշն նվագելու պատշաճ հմտություն: Հնչյունների հստակ արտաբերումը եւ կատարման դասական ու հավասարակշռված ոճն առավել ցայտուն դրսեւորվեցին ստեղծագործության երկրորդ բնության հմայքն ու հոգու անդորը արտացոլող մասում:

Այդ օրը մեր ֆիլհարմոնիկը առանձնահատուկ վերելքով անցկացրեց ողջ համերգը՝ վերջինիս երկրորդ բաժնում կատարելով Ռախմանինովի 2-րդ սիմֆոնիայի օրհներգ հիշեցնող երաժշտությունը: Ծրագրից դուրս կատարվեց նաեւ երաժշտական մի գոհարիկ հատված Լորիս Ճգնավորյանի «Օրելլո» բալետից, որի ցուցանողը կկայանա մի քանի օր անց՝ հոկտեմբերի 23 եւ 24-ին, Ազգային օպերայի եւ բալետի թատրոնում:

ԼԵՎՈՆ ԼԱԶԻԿՅԱՆ

Հոբելյանական երեկո նվիրված Հայկանուշ Դանիելյանին

Հայ օպերային արվեստի առաջին մեծության աստղերից է Հայկանուշ Դանիելյանը: Այսօր լեգենդի նման են հնչում թե նրա անունը, թե ձայնը: Նրան լսել են մեր ծնողները եւ հիացել՝ մեզ ընդամենը փոխանցելով իրենց սերն ու անսփոթ ակնածանքը երգչուհու հանդեպ: Հոտեմբերի 16-ին Ազգային օպերայի եւ բալետի թատրոնը կազմակերպել էր հոբելյանական ցերեկույթ նվիրված մեծ արտիստուհու ծննդյան 100 ամյակին: Ներկաների մեջ էին նշանավոր կոմպոզիտորներ եւ երգիչ-երգչուհիներ, արտիստուհու արվեստի հին ու նոր երկրպագուներ: Նրանք եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու երգչուհուն, նաեւ հավաստելու նրա թողած գեղարվեստական ավանդույթների շարունակելիությունն ու անընդհատությունը:

Ցերեկույթի բացմանը մեծարման խոսք ասաց թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր ռեժիսոր Տիգրան Լեւոնյանը: Նա նաեւ վարպետորեն վարեց ողջ հանդիսությունը՝ ներկաներին տեսանելիորեն ներկայացնելով երգչուհու կյանքի կարեւոր էջերը, որոնք մեջընդմեջ ընդհատվում էին թատրոնի առաջատար եւ երիտասարդ երգիչների ելույթներով: Հուզիչ էր հատկապես երգչուհու ծոռնուհու՝ կոնսերվատորիայի ուսանող Ջուլիետ Գալստյանի երգը, որը կատարեց իր մեծ տատի փառահամար հանդիսացող Անուշի մեներգը Արմեն Տիգրանյանի համանուն օպերայից: Համերգը եզրափակվեց Տիգրան Չուխաջյանի «Արտակ Բ»-ի մի հատվածի ցուցադրմամբ, որտեղ Արտակի դերը կատարեց թատրոնի մենակատար Կոնստանտին Սիմոնյանը: Լ. Լ.

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բարձրագույն խմբի 2-րդ առաջնություն
24-րդ տուր
«Նաիրիտ»-ՀՄԸՄ 0-4
«Ցեմենտ»-«Վան» 5-0
«Կոտայք»-«Մալաթիա Կիլ.» 9-2
«Քասախ»-«Բանանց» 0-8
«Երազանք»-«Արարատ» 0-1
«Ձվարթնոց»-«Իմպուլս» 6-4
ՀՄՄ ՖԻՍԱ-«Շիրակ» 1-2

24-րդ տուրն այլի ընկավ սենսացիոն արդյունավետությամբ: 7 հանդիպումներում խփվել է 42 գոլ (միջինը մեկ խաղում ուղիղ 6 գոլ), որը ռեկորդ է, բայց ոչ ուրախացնող: Ո՞վ կարող է բավականություն ստանալ 8-0, 6-4, 9-2 հաշիվներով ավարտված հանդիպումներից, այդ թվում բացառությամբ հաղթողների: Հասկանալի է, որ այդ խաղերն անցել են կողմերից մեկի բացահայտ առավելությամբ եւ առանց լուրջ մրցակցության: Իսկ մարզասերները մարզադաշտ են գնում հետաքրքիր եւ լարված խաղ տեսնելու ակնկալիքով: Միայն «Երազանքը» եւ ՀՄՄ ՖԻՍԱՆ կարողացան լուրջ ճակատամարտ տալ 4 առաջատարներից երեւույթին: Առաջնության ավարտին մնացել է ընդամենը 6 տուր, բայց կարելի է ասել, որ խնդրական առաջնությունը նոր է սկսվելու, քանի որ առաջատար քառյակի միջեւ հանդիպումների հիմնական մասը դեռ առջեւում է, եւ դժվար է ասել, թե ինչպիսի հանգուցալուծում կլինի: Ցերեւս միայն դա է մխիթարում: Ի՞նչ մրցակցության մասին կարող է խոսք լինել, երբ առաջատարներից մեկը՝ Կոտայքի շրջանի «Բանանցը» 2-րդ շրջանի իր 8 հանդիպումներից 7-ն ավարտել է խոշոր հաշիվներով, մրցակիցների դարպասը խփելով 41 գոլով (միջինը մեկ խաղում գրեթե 6 գոլով):

24-րդ տուրում ամենահետաքրքիրը ՀՄՄ-ՖԻՍԱ-«Շիրակ» հանդիպումն էր, որը սկզբից մինչեւ վերջ անցավ փոխնփոխ գրոհներով: Բարձրագույն խմբի նորեկը՝ Արարատի «Ցեմենտը», որը, կարելի է ասել, ամբողջովին համալրված է տեղի կաղրերով, տուրից-տուր ավելի վսահ ու հասուն խաղ է ցուցադրում: «Ցեմենտը» նույնիսկ հակակնում է դասավորը 5-րդ տեղին: Իսկ ահա զարմանք է հարուցում մեր որակյալ թիմերից մեկի՝ Երեւանի «Վանի» նահանջը: Առաջնության ամենավճռական փուլում, «Վան»-«Շիրակ» հանդիպումից հետո, թիմից հեռացվեց մեր երիտասարդ եւ խոստումնալից մարզիչներից մեկը՝ սպորտի վարպետ Արսեն Չիլինգարյանը: Արդյունքը երկար սպասեցնել չտվեց: Բարոյահոգեբանական ծանր իրավիճակում հայտնված «Վանը» 0-5 հաշվով անակնկալ պարտություն կրեց «Ցեմենտից»: Պատիվ ու հարգանք թիմերի հովանավորներին, որոնք հայրենանվեր ու շնորհակալ գործ են կատարում ֆուտբոլի զարգացման հարցում, բայց նախկին ԽՍՀՄ օրինակով եւ ուժային մեթոդներով հեռուն չենք գնա: Հավանաբար նման հարցերում ֆեդերացիան էլ իր վճռական խոսքը պետք է ասի, այլապես շուտով ոչ միայն ֆուտբոլիստներ չենք ունենա, որոնք հոտով մեկնում են արտասահման, այլեւ մասնագետներ:

Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել նաեւ աղյուսակի ստորին հատվածում: Միանգամից 5 թիմի դեռ բարձրագույն խմբից դուրս մնալու լուրջ վտանգ է սպառնում: Հերթական տուրում այդ տեսակետից 2 առանցքային հանդիպում կայացավ. Կոտայքը՝ կարեւոր հաղթանակ տարավ «Մալաթիա-Կիլիկիայի» նկատմամբ, իսկ «Ձվարթնոցը» 2 խիստ անհրաժեշտ միավոր վստակեց «Իմպուլսի» հետ խաղում:

«Քասախի» հետ խաղում հերթական 2 գոլի հետեւանք դարձավ «Բանանցի» հարձակվող Անդրանիկ Հովսեփյանը, որը 25 գոլակով միանձնյա սկսեց գլխավորել ռմբարկուների ցուցակը, իսկ «Բանանցը» 22 խաղում խփեց 103 գոլակ:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի կարգադրահական կոմիտեն քննարկեց «Քասախի» բողոքը կազմված «Վան»-«Քասախ» հանդիպման հետ (3-1), որը ժամանակից 5 րոպե շուտ է ավարտվել: Խաղի արդյունքը չեղյալ հայտարարվեց, եւ այն վերախաղարկվելու է հոկտեմբերի 23-ին:

ՀՀ բարձրագույն խմբի առաջնության աղյուսակը հոկտեմբերի 19-ի դրությամբ

	Ս	ԿՄ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Տ
1. ԱՐԱՐԱՏ	43	3	23	20	3	0	76-8	+68
2. ԲԱՆԱՆՑ	40	4	22	20	0	2	103-17	+86
3. ՇԻՐԱԿ	38	6	22	19	0	3	81-16	+65
4. ՀՄԸՄ	36	8	22	17	2	3	70-23	+47
5. ՎԱՆ	25	17	21	12	1	8	58-35	+23
6. ՑԵՄԵՆՏ	24	22	23	10	4	9	39-41	-2
7. ԵՐԱԶԱՆՔ	21	25	23	9	3	11	35-47	-12
8. ՀՄՄ ՖԻՍԱ	19	23	21	9	1	11	42-35	+7
9. ՆԱԻՐԻՏ	17	29	23	7	3	13	20-49	-29
10. ԿՈՏԱՅՔ	16	28	22	7	2	13	27-59	-32
11. ՁՎԱՐԹՆՈՑ	14	30	22	6	2	14	30-51	-21
12. ԿՈՏԱՅՔ	11	35	23	5	1	17	38-69	-31
13. ԻՄՊՈՒԼՍ	11	33	22	5	1	16	31-75	-44
14. ՔԱՍԱԽ	10	32	21	4	2	15	16-85	-69
15. ՄԿ	7	37	22	1	5	16	18-74	-56

Ծանոթություն. ԿՄ կորցրած միավորներ

Բնութագիր ֆրանսիական ձեւով

Ֆրանսիայի ուժեղագույնների խմբում հանդես եկող մեր 2 բասկետբոլիստուհիները Անահիտ Հակոբյանն ու [illegible] Ալեքսանդրովա-Քոչարյանն ուշադրություն [illegible]նում են եւ նրանց մասին [illegible]զմաթիվ նյութեր են տպագրվում ֆրանսիական մամուլում: Ահա ֆրանսիական ձեւով մեր աղջիկների բնութագիրը թերթերից մեկում.

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈԲՅԱՆ Հատկապես հոյաս է, որ հայկական ծագում ունի: Անահիտը միշտ էլ իր երկիրը բարձր է դասում, քան դրամը եւ եթե ընդունել է Ֆրանսիայում խաղալու հրավերը, նրա նպատակն է օգնել ընտանիքին եւ ծառայություն մատուցել երկրին: Տաղանդավոր խաղացող է եւ ձգտիս իր նետումներում: Նա պատրաստ է իր պրոֆեսիոնալ կյանքը կապել ֆրանսիական բասկետբոլի հետ: Շատ կոկետ է: Միշտ էլ խաղերին եւ նույնիսկ մարզումներին ներկայանում է հարդարված:

ԼՅՈՒԲՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԱ-ՔՈՉԱՐՅԱՆ. 1980-90-ական թվականների ռուս լավագույն խաղացողներից մեկն է Լյուբովը: «Սերեն» ժամանելուց ի վեր բազմաթիվ միավորներ է արձանագրել: Կենտրոնակ, պարտության մատնող (համառ), եռանդուն եւ կրակոտ, նա խաղը միշտ վերցնում է իր վրա, ապահովում է ներկայացումը եւ խաղընկերներին մղում պայքարի: Իսկական պրոֆեսիոնալ է: Միաժամանակ զբաղվում է իր դստեր՝ Գալինայի դաստիարակությամբ եւ ֆրանսիական կյանքին հարմարվելու դժվարություններ ունի: Կյանքում ուրիշ ոչինչ չգիտի, բացի բասկետբոլ խաղալուց եւ հայկական խոհանոցի ճաշեր պատրաստելուց:

Ինչպես գրել է մեր թերթը, «Սերեն-Լուսակը» 5-րդ տուրում հյուրընկալվելիս 43-69 հաշվով գիջել է ուժեղագույն թիմերից մեկին՝ «Էֆսին»: Դա շատ ծանր խաղ էր «Սերենի» համար եւ մեր աղջիկները լինելով ուժեղ հակողության տակ, համեմատաբար լիլ միավորներ վաստակեցին: Ալեքսանդրովան՝ 10, Հակոբյանը՝ 15: «Էֆսի» առաջատար եւ առաջնության ռմբարկու Սանտանիելոն նույնպես իր համար համեստ արդյունք ցույց տվեց (16 միավոր): Կրկին արդյունավետ խաղաց առաջատարի «Տարբի» խաղացող, ամերիկացի Անդրեա Ստինսոնը, որը վաստակեց 27 միավոր եւ որի հասակն ընդամենը 177 սմ է: Ամենաարդյունավետ խաղացողի մրցույթում երեւի հիմնական պայքարն ընթանա այս բասկետբոլիստուհու, որը նախորդ առաջնությունում միջինը մեկ խաղում վաստակել է 21,5 միավոր եւ Ալեքսանդրովա-Քոչարյանի միջեւ: Համենայն դեպս Ստինսոնը ռմբարկուների ցուցակում շրջանցեց Սանտանիելոին եւ Ալեքսանդրովային:

Ֆրանսիայի առաջնության ռմբարկուները 5-րդ տուրից հետո.

1. Ստինսոն («Տարբ», 177 սմ, ԱՄՆ)-127
2. Սանտանիելո («Էֆս», 183, Ֆրանսիա)-125
3. Ալեքսանդրովա («Սերեն», 174, ՀՀ)-112
4. Սալվեւա («Միռանդ», 182, Բուլ.)-102
5. Նազարենկո («Շալլ», 195, Ուկր.)-94
6-7. Ջոնս («Վաթանիեն», 190, ԱՄՆ)- 93
Քրուֆորդ («Նիս», 195, ԱՄՆ)-93
8. Հասաֆ («Սեռասբուրգ», 188, ԱՄՆ)- 87
9. Հակոբյան («Սերեն» 185, ՀՀ)-82
10. Խուդաբուկա («Բուրժ», 195, Ռուս.)- 80

ԱՀԱՐՈՆ ԲՈՅԱՋՅԱՆ
Փարիզ

Կամոդոմանեսը փրկեց իր պատիվը

Ֆլորենսիո Կամոդոմանեսը մեծ դեգերումներից հետո կարողացավ փրկել եւ իր պատիվը եւ Կարոլով-Ֆինան մրցախաղը: Նրան հաջողվեց հյուծել Ինդոնեզիայի իշխանություններին կիսաս մնացած այդ մրցախաղի 2-րդ կեսն անցկացնել Ջակարտայում: Այն վերսկսվեց եւ 13-րդ պարտիան ավարտվեց ոչ-ոքի: Հաշիվը դարձավ 7.5-5.5 հօգուտ Կարոլովի: Իսկ Կասպարով-Շորթ մրցամարտի 18-րդ պարտիան ավարտվեց ոչ-ոքի: 11.5-6.5 հաշվով առջեւում է Կասպարովը:

Շորթ-Կասպարով
16-րդ պարտիա
Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 d6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 a6 6. Փc4 e6 7. Փb3 b5 8. 0-0 Փe7 9. Ցf3 Ցc7 10. Ցg3 Ձc6 11. Ձ:c6 Ց:c6 12. Նe1 Փb7 13. a3 Նd8 14. f3 0-0 15. Փh6 Ձe8 16. Սh1 Սh8 17. Փg5 Փ:g5 18. Ց:g5 Ձf6 19. Սad1 Նd7 20. Նd3 Նfd8 21. Նed1 Ցc5 22. Ցe3 Սg8 23. Սg1 Սf8 24. Ցf2 Փa8 25. Ձe2 g6 26. Ձd4 Ցe5 27. Նe1 g5 28. c3 Սg7 29. Փc2 Նg8 30. Ձb3 Սf8 31. Նd4 Սe7 32. a4 h5 33. ab ab 34. Նb4 h4 35. Ձd4 g4 36. Ն:b5 d5 37. Ց:h4 Ցh5 38. Ձf6+, սեւերը հանձնվեցին: ■

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Mercury ENTERPRISE

«ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը հնարավորություն է ընձեռում ներդնել ձեր խնայողությունները հետեւյալ տոկոսադրույքներով

3 ամիս 60%
6 ամիս 150%

ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ 1993 Թ. ԹՈՂԹԱԴՐԱՄՆԵՐՈՎ

Դուք կրկնապատկում եք Ձեր կապիտալը տանը նստած

ՄԵՆՔ ԿԱՇԽԱՏԵՆՔ ՁԵՐ ՓՈԽԱՐԵՆ

Հասցեն՝ «ԱՆԻ» հյուրանոց, 6 հարկ, 636 սենյակ

Հեռ. 594-636

PUBLISET

NICA INVESTMENT COMPANY

ՆԻԿԱ Ինվեստիցիոն Ընկերությունը Ձեզ համար աննախադեպ հնարավորություն է ընձեռում ներդնել գումարներ մեր ծրագրերում եւ մասնակիցը դառնալ արտադրական, գյուղատնտեսական եւ առեւտրագնման գործունեությանը:

Իր ավանդատուներին ՆԻԿԱ-ն առաջարկում է.

- ամենացածր գներով գնել սննդամթերք
- ընկերության նպատակամղված գործունեության շնորհիվ կրկնապատկել Ձեր կապիտալը:

Մինչեւ 1992 թ. թղթադրամները ընդունվում են փոփոխված պայմաններով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընկերության գրասենյակ:

ՆԻԿԱ-ն երաշխավորում է.

ռուբլու ավանդների դեպքում (1993թ. թղթադրամներով).

4 ամիս 70 %
6 ամիս 120 %
12 ամիս 330 %

տարադրամային ավանդների դեպքում.

50 % տարեկան

ՄԵՆՔ ԿԱՐԾՈՒՄ ԵՆՔ, ԴԱ ՁԵԶ ԿՀԵՏԱՔՐՔՐԻ

Մեր հասցեն. Երեւան, Սայաթ-Նովա 7 (Օպերայի դիմաց) Հեռ. 56-79-46

PUBLISET

Ս. ՏԱԹԵՎԻԿ

Ս. ՏԱԹԵՎԻԿ

«Ս. ՏԱԹԵՎԻԿ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ է ԸՆՁԵՌՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ: ԻՐ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻՆ «Ս. ՏԱԹԵՎԻԿՆ» ԱՌԱՋԱՐԿՈՒՄ է ՑԱԾՐ ԳՆԵՐՈՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ:

Ս. ՏԱԹԵՎԻԿԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ է ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

4 ամիս-80 տոկոս
6 ամիս-180 տոկոս
9 ամիս-250 տոկոս
12 ամիս-400 տոկոս
1 տարուց ավելի-500 տոկոս

ԱՎԱՆԴՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԵՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՈՎ ԵՎ ՖԱՐԱԴՐԱՄՈՎ:

Մեր հասցեն. Էրեբունի հյուրանոց, 1-ին մասնաճյուղ, 3-րդ հարկ, 316, 319 սենյակներ. Հեռ. 58-20-78. Աշխատանքային ժամերը 10-ից 17-ը. Հանգստյան օրը կիրակի

PUBLISET

BAGARAN Corporation

Հեռ. 587367

«ԲԱԳԱՐԱՆ» կոոպերատիվը հնարավորություն է ընձեռում ներդնել Ձեր խնայողությունները հետեւյալ տոկոսադրույքներով

4 ամիս 80%
6 ամիս 180%
12 ամիս 500%
Մեկ տարուց ավել 520%

Ամեն ամիս ներդրված գումարի տոկոսաչափերի վճարումը արտահայտված ոսկով, տարադրամով, անշարժ գույքով:

«Էրեբունի» հյուրանոց, երկրորդ մասնաճյուղ, 4-րդ հարկ, 403 սենյակ

PUBLISET

ՆՈՅ

«ՆՈՅ» ԿՈՄԵՐՑԻՈՆ ԲԱՆԿ

Ներդրած Ձեր ավանդների ՇԱՀՈՒՅԹՆԵՐԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ են, քանի որ դրանք իրական են ու մանրակրկիտ հաշվարկված բարձրակարգ մասնագետների կողմից:

«Անի» հյուրանոց 507, 514 սենյակներ հեռ. 59-45-14, 56-49-30

Չեխովի 23, հեռ. 46-25-27. Հանրապետություն 67, հեռ. 56-51-07

Աշխատանքային ժամեր՝ ամեն օր 10:00-16:00
Բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

PUBLISET

ՏԷՀԵԽ-Ի ԵՐԵՎԱՆԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Ամենահին տուրիստական կազմակերպությունն է հանրապետությունում

Կազմակերպում է տուրիստական ուղեգրերի վաճառք շուկայական գներից ցածր արժեքով, միաժամանակ իր ավանդույթների համաչափ երաշխիքներով.

Հետեւյալ երթուղիներով՝ Հնդկաստան, Չինաստան, Սիրիա, Գերմանիա, Թաիլանդ, Հունաստան, Արաբական էմիրություններ, Եգիպտոս, Մոնղոլիա

իսկ Մոսկվա, Ս. Պետերբուրգ, ՍՊԳ երկրների խոշոր քաղաքների ուղեգրերը Դուք կարող եք ձեռք բերել ինչպես փոխանցման կարգով, այնպես էլ մինչեւ 1993 թ. թողարկված ռուբլով (հնով).

Հասցեն՝ Զաքիյան 8 (Կիրովի անվան մանկական այգու դիմաց): Հեռ. 56-44-18, 52-29-02, 52-67-23, 52-98-11:

Գլխավոր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր ՂԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh® հանգակարգչային շարաածը «Ազգ» թերթի

Azg armenian daily

Editor H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Ոճային ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. գրասենյակ. Երեւան-23, Արովյան 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպարանակ 25 000. Պատվեր 1617. Ստորագրված է տպագրության՝ 18.10.1993

digitised by A.R.A.R.@